

38

5
9-60

1913



2010

[Faint handwritten scribbles]

~~51082~~
~~9-60~~

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ջ Ր Ո Յ Յ Ն Ե Ր

(այլ և այլ նշանաւոր հեղինակների)



Ա. պրակ.

Թարգմանեց

Նիկողայոս Բոսնակեան:



НАХИЧЕВАНЬ и-Д.
Тип. С. Я. Авакова.


Լ. ՆԱՌԻՋԵՒՆ
Տպ. Ս. Յ. Աւագեանի.

1913

5(082) *այ*
9-60

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ջ Ր Ո Յ Ց Ն Ե Ր

(այլ և այլ նշանաւոր հեղինակների)



1808
36487

Ա. պրակ.

Թարգմանեց

Նիկողայոս ֆհ. Բուսակեան:



12002

Ս. Ս. Ս. Ս. Ս.

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Սերոբբէ Աւագիանի
1913

15963


ՎԱՂԱԹԱՌԱՄ ՊԱՏԱՆԻ

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԽԱԽԼԱԾԵԱՆԻ

յիշատակի

նախորդ է

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ:



Քրիստափոր Պետրոսեան Խախաճեան



† ՔՐԻՍՏԱՓՈՐ ԽԱԽԼԱՃԵԱՆ

Քրիստափոր Խախլանեանը Ռոստովի հայազգի վաճառական Պետրոս Խախլանեանի որդին, ծնունդ է Նոր-Նախըջեանում, սեպտեմբերի 12-ին 1896 թ. Սիզդանական կրթութիւնը ստացել է տանը. 10 տարեկան հասակում գնում է Տիրիխ, ուր կրթում է Շվեդարեայի հպատակ երեխաների հետ մ'իասին, ժողովրդական դպրոցումը: Մի տարուց յետոյ անցնում է Լոնդոն. եւ որովհետեւ անգլիերէն չգիտէր, նա մտնում է Լոնդոնի մօտ՝ Biekley քաղաքի Amessurv Sshol մասնաւոր դպրոցը, որտեղ շուտով ծանօթանալով անգլիերէն լեզուին՝ սկսում է լուրջ պարապել եւ աչքի է ընկնում որպէս լաւ աշակերտներից մէկը: Իւր հեզաբարոյեւ քաղցր բնատրութեամբ նա գրաւում է իւր դասընկերների ու շրջապատողների սէրը. ինչպէս առհասարակ Անգլիայի դպրոցներում երեխաները խիստ շատ պարապում են սպորտով, նա էլ ահա շուտով ցոյց տուեց իւր յստաջադիմութիւնը խաղերի ժամանակ եւ մինչեւ անգամ մրցութեան ժամանակ ստացաւ մի քանի պարգեւ: 14 տարեկան հասակում նա պէտք է աւարտէր այդ ուսումնարանը ու մտնէր աւելի բարձրագոյն, վերջինս էլ աւարտելով՝ նա մտադիր էր մտնել Օքսֆորդի համալսարանը. Սակայն բարի պատանու ազնիւ ձգտումները չիրագործւեցին: Արձակուրդից տուն վերադառնալիս, նանապարհին ծանր հիւանդացաւ. ծնողները ամեն ջանք անխնայ գործ դրին փրկելու սիրասուն զաւակի կեանքը, բայց իզուր, ոչինչ չօգնեց: Վաղաժամ մահը վրայ հասաւ Քրիստափորին, որ մեծ վիշտ պատճառեց, թէ՛ ծնողներին եւ թէ՛ ազգականներին: Երա ծաղիկ հասակը թօշնեց, կեանքի վերջին դողդողացող թերը կտրուեց 1910 թ. դեկտեմբերի 16-ին:

Հանգիստ աճիւնիդ վաղաթմառամ պատանի:

Յ Ա Ն Կ

- I. Հրաքղիսային շեններ:
- II. Ասրակահայտի ու նրա ստակալի փախճանք:
- III. Երկրի ներքին մասը:
- IV. Ինչպես եւի հաշտու մերկի հետքիւնք:
- V. Տիեզերքի ծագումը:
- VI. Տիեզերքի յրժմած ստեղծումները:

ՀՐԱԲՂԽԱՅԻՆ ԼԵՌՆԵՐ.

(Գր. Կվաշի)

1.

Մարդը յաղթեց բնութեանը: Մարդը նուաճեց երկիրը: Այսպէս են ասում բնագէտները, քիմիկոսները, ինժեներները, և գործնական գիտութիւններէ շատ ներկայացուցիչներ: Մասամբ դա այնպէս էլ է: Չէ՞ որ մենք սովորեցինք շահաւէտ կերպով մշակել երկիրը. երկաթուղու ցանցերով պատեցինք նրան. մայր երկրրի լայնատարած հարթութեան վրայ բարձրացրինք վիթխարի տներ. մեր հանքահորերով և գետնափոր անցքերով խորասուզուեցինք նրա ծոցը:

Մարդը նուաճեց երկիրը: Այդպէս են ասում իմաստունները: Բայց հէնց որ մայր երկիրը ուրախ թափահարում է իր գլուխը,— անդձնուզն են գլորում թզուկներէ աշխատութիւնները, սրոնք իրանց անպարտելիութեան մասին մեծ կարծիք ունէին: Եւ մարդուս չեն կարող օգնել ոչ հանքահորերը ու գետնափոր անցքերը, ոչ ծակող մեքենաները, որոնց յաջողւել էր մտնել երկրի մէջ 2 վերստ խորութեամբ...

Մենք արդեօք մեր սովորակի վերայ ունեցած իշխանութեամբ կարող ենք հպարտանալ: Եւ ստորերկրեայ ոյժերի սոսկալի երևոյթներէ դէմ ունեցած կռուի մէջ արդեօք մեր կուլտուրայի գոյութեան ամբողջ ընթացքում կարողոցանք հեռուն գնալ:

Եւ այժմ էլ դեռ երկրաշարժի և կամ հրաբլխային ժայթքումների ժամանակ «Բնութեան թագաւորի» համար փրկութեան միայն մի միջոց կայ. այն է փախուսար, փախուստ առանց յետ նայելու, մտածելով ազատել իւր խղճալի կեանքը:

«Արտավիրժած զանգուածը հետամուտ էր լինում մեզ, անագին ձիւնակոյտը առաջ էր մղուում, լուում էին երեխաների լացը, կանանց հեկեկանքն ու տղամարդկանց աղաղակները: Նրանք իրանց ճակատագիրըն էին ողբում: Կային և այնպիսիները, որոնք մահուան երկիւղից իրանց համար մահ էին խնդրում»:

Այս խօսքերը, որ գրուած էին գրեթէ սրանից երկու հազար տարի առաջ Պլինիոս կրտսերի ձեռքով, Տակիտոսին գրած նամակում, Վեգուվի ժայթքումի առիթով 79 թ. Ք. ծ. յ.,— այժմ էլ դեռ չեն կորցրել իրենց նշանակութիւնը: Վեգուվը հարիւր տարիներով համարւում էր հանգած. ոչ ոք չէր մտածում նրա խորութեան մէջ խլիւղացող հրէշաւոր ոյժերի մասին: Հռովմայեցոց իշխանութեան ծաղկելու դարաշրջանում Վեգուվի ստորոտների ու փեշերի վերայ բարգաւաճեց յոյների «Նոր Յունաստան» կոչուած մեծ գաղութը: Դեռ Տիբերիոսի թագաւորութեան օրերում սկսուեցին երկրաշարժները, բայց այն ժամանակ նրանց վերայ քիչ էին ուշք դարձնում թէև Ստրաբոն բնագէտը ցոյց էր տուել Վեգուվի առանձնայատկութեան վերայ, որը «սնունդի պակասութեան պատճառով հանգած էր համարւում, որպիսի եզրակացութեան են բերում կրակից ոչնչացած սև քարերը»:

Անհաւատալի էր թւում, որ Վեգուվը կ'սկսի ժայթքել հրահեղուկ զանգուած: Չէ որ խաճնարանի ներսում աճել էր ճոխ բուսականութիւն, անագին ծառեր բարձրանում էին նրա փեշերի վերայ և բազմաթիւ փորրիկ լճակները փոխում էին տեսարանի միակերպութիւնը: Բայց 63 թուականին երկրաշարժները կըրկնուեցին և Պոմպէյը աւերակ դարձրին: Կարճ ժամանակում նոյն տեղում նորից քաղաք հիմնուեց աւելի ճոխ

ու աւելի հոյակապ առաջուանից... Բայց ահա 79 թուականի կէսերում սկսում են տատանումները— և օգոստոսի 23-ին անսպասելի կերպով կատաստրոֆա է առաջանում. ժայթքում է Վեգուվը և բոլորովին ոչնչացնում Պոմպէյը, Ստաբեան ու Հերկուլանը:

Բնորոշ է ժայթքումի այդ անսպասելիութիւնը, որ յանկարծ վրայ է հասնում մեզ և յաճախ փակում է փրկութեան բոլոր ճանապարհները:

Բայց միթէ այժմ ևս երկրաշարժները ու հրաբլրային ժայթքումները մեզ յանկարծակի չեն բերում: Յիշենք այն սոսկալի անակնկալ դէպքը, որ 1909 թուականի սկիզբը միջնացրեց, այսինքն՝ Մեսսինայի երկրաշարժը: Այդ թուականին Իտալիայի անբաղդ բնակիչները ոչինչ չկատկածելով, յանկարծ նոր երկրաշարժի բռնուեցին և տուին բազմաթիւ զոհեր:

II.

Այն, երկրաշարժներ ու հրաբլրային ժայթքումներ նախագուշակել մենք դեռ անկարող ենք: Եթէ որևէ երևոյթ ճանաչելը նշանակում է գուշակել և նրա սկիզբը՝— ապա պէտք է խոստովանենք, որ երկրաշարժներն ու հրաբլրային երևոյթները մենք չենք ճանաչում:

Հրաբլրային երևոյթների վերաբերմամբ թէ որքան մեծ է մեր անգիտութիւնը, կարելի է դատել նրանից, որ մինչև 1902 թուականը, գիտութեանը յայտնի էր միայն նրանց մէկ տիպը, որը գիտութիւնը համարում էր միակ հնարաւորը: Դպրոցական դասագրքերում մինչև այժմ միայն այս տիպն է նկարագրուած: Եւ միայն 1902 թուականին գիտութիւնը

ծանօթացաւ մի բոլորովին նոր, մինչև օրս իրան անյայտ ժայթքումի տիպի:

Ի՞նչն է այս երկու տիպերի էական առանձնա-յատկութիւնները:

Թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ տիպի հրաբլխային ժայթքումները գազերի, ջրային գոլորշիների ու հալած նիւթերի բաժանման մէջն է կայանում, որոնք բարձրանում են երկրի ծոցից և դուրս նետուում նրա մակերևոյթի վերայ:

Բայց հրաբլխային ժայթքումների տիպերը գահագնուում են միմիանցից իրենց կործանիչ գործողութեան բնոյթով:

Որպէ՛սզի այդ տիպերի առանձնայատկութիւնները մասին մի հասկացողութիւն տանք՝ նկարագրենք երկու ժայթքում. Վեգուվի 1906 թուականի վիթխարի ժայթքումը և Մարտինիկ կղզու վրայ գտնուող Մոն-Պելէի 1602 թուականի սարսափելի ժայթքումը:

1906 թուի Վեգուվի ժայթքման պատկերը հետևեալն է:

Սպրիլի 7-ին, երեկոյեան դէմ, հրաբլխի կոնաձև մասում կազմուում է մի խորշ և ճանապարհ է բանում լաւայի բաւականաչափ հոսանքի առջև արագ անցնելով հրաբլխի անապատ բարձրութիւնները, լաւան հետզհետէ ցած է իջնում, տապալելով և իր հետ տանելով աներ և մի քանի ժամում շրջակայ բնակութիւնները գարձնում է սև լաւայով ծածկուած անապատ: Քաղաքների գրեթէ բոլոր բնակիչները կարողացան ազատուել:

Նոյն երեկոյեան ուժգին պայթումներից յետոյ խառնարանը սկսում է դուրս նետել շիկացած նիւթեր, կազմելով գրեթէ չընդմիջուող հրային մի շատրուան. հրաբուլխի ամբողջ գագաթը պատած է կրակով: Ժամը տասնըմէկի մօտ հրաբուլխը խաղաղուում

է մի քանի րոպէ. սակայն շուտով պայթումները վերըսկսում են մեծացած ոյժով: Բայց ահա պատկերը փոխուում է. հրային շատրուանը տեղի է տալիս ծխի սև քուլաների վիթխարի սիւնին, որի միջից երբեմն կայծակներ է դուրս թռչում:

Կէս գիշերից յետոյ ստորերկրեայ հարուածները ցնցում են Վեգուվի շրջակայքը: Մի քանի ժամուայ ընթացքում քարի ու մոխրի անձրևը ծածկում է հիւսիս և հիւսիս-արևելեան հրաբլխի փեշերը և հետզհետէ ուժեղանալով՝ սպառնում է Օտտաճանօ և Սան — Ջուզեպպէ փոքրիկ քաղաքներին: Դժբաղդ բնակիչների մէջ յանկարծ ահ ու սարսափ է տիրում: Ամենից աւելի խելացիները թողնում են իրանց տները և մութ գիշերին փախուստի մէջ են գտնում իրենց փրկութիւնը. տատանուող, երկչոտ հիւանդները ընդհակառակը՝ փակուում են իրանց տներում, շատ մարդիկ էլ եկեղեցիներումն են փնարում իրանց փրկութիւնը:

„Անձրևի“ հարուածներից աների ապակիները կոտրուում են. կտուրները, որ ծանրաբեռնուած են քարերով, թերւում ու խորաակում են, իրանց հետ կործանելով ներքին յարկերը և պատերը, թաղելով իրանց տակ 200 անբաղձներ. նրանցից 94 հոգի մեռան Սան — Ջուզեպպի Վեկեցցում:

Արշալոյսին այդ անձրևը տեղի է տալիս բարակ փոշու, որ անընդհատ, մի քանի օր շարունակ թափուում էր:

Ժայթքումի ժամանակ գետինը ծածկուեց մէկ մետր հաստութեամբ սև լաւայի փոքրիկ կտորներով, որոնց քաօսային դասաւորութիւնը սուր կերպով տարբերում է մոխրի դասաւորութիւնից. վերջինս դասաւորուեց կանոնաւոր շերտերով:

Սա հրաբլխային ժայթքումի կործանիչ գործո-

դուժեան ամենասովորական երևոյթն է. մինչև 1902 թուականը սա համարուում էր, ինչպէս վերևում ասուած էր, միակ հնարաւորը: Բայց 1902 թուի Մոն-Պելլէի ժայթքումը գիտութեանը ծանօթացրեց հրաբլրխային ժայթքումի աւելի սոսկալի տիպի հետ, այնպիսի տիպի, որը կոչուում է պելրածն (пелеобразный).

Մոն-Պելլէն համարուում էր գրեթէ հանգած հրաբուլր:

Նրա ստորտաի դիւթիչ տեղերում տեղաւորւեց ուրախ, առևտրական Սեն-Պիեր քաղաքը, որը բոլոր ճանապարհորդներին ու տուրիստներին հիացմունք էր պատճառում:

Առաջին նախագգուշացնող նշանները սկսեցին երևան դալ Սուխով լճի խառնարանում 1902 թուի ապրիլի սկզբներում. խառնարանը սկսեց դուրս նետել բարակ մոխիր, որը գնալով շատանում էր: Սկզբում հրաբլրի արթնանալը միայն հետաքրքրութիւն էր շարժում, իսկ յետոյ նա անհանգստութեան առարկայ դարձաւ շրջակայ բնակիչների համար. ի վերջոյ երևան եկան աւելի սոսկալի յայտանիշներ, որոնք ազդարարում էին կատաստրոֆայի մօտենալը:

Մայիսի 8-ին երեկոյեան Մարտինիկից դէպի հարաւ գետեղուած Սեն-Լիւսի փոքրիկ կղզու նաւահանգստում յայտնուեց մի սարսափելի տեսքով նաւ. նա ներկայացնում էր առանց կայմի մի երկաթեայ նաւի միջին մաս, շրջապատուած ամեն կողմից ծխով, որ հեռուից ձիւնի ծածկոյթի է նմանում:—

— Ո՞վ էր դուք և ո՞րտեղից — լսուեցին մի քանի վախեցած ձայներ ամբոխի միջից, որոնք հաւաքւել էին ծովափը:

— Մ՞իթէ դուք մեզ չէ՞ք ճանաչում — պատասխանեց մի ձայն, որի մէջ լսուում էր վիշտ ու յու-

սահատութիւն:

Մենք եկանք դժոխքի դռների տակից: Դուք կարող էք յայտնել աշխարհին, որ Սեն-Պիերը այլևս չկայ:

Ընթերցող, սա էդգար — Պօէյի պատմուածքը չէ. սա ճշմարիտ իրողութիւն է. այստեղ հաղորդուած են այն նաւի նաւապետի իսկական խօսքերը, որը ազատուել էր Սեն-Պիերի նաւահանգստից:

Մայիսի 8-ին առաւօտեան մօտաւորապէս ժամը 8-ին, երբ ջրային գոլորշիների ու մոխիրների բարձր սիւնը բարձրանում էր դէպի պարզ երկինք՝ յանկարծ հնչեց սոսկալի որոտում, խառնարանից դուրս էր վիժում դէպի երկրի հարթութիւնը հրէշաւոր մոխրագոյն գնդաձև մի գանգուած, որ իրենից կայծակներ էր արձակում. նա գնում էր քաղաքի վերայ. նրա հարուածներից ընկղմուեցին և շարդուեցին ծովի երեսին կանգնած նաւերը: Այս հրէշաւոր ամպը սղոյեց քաղաքը իր հրային շնչով և կանգնեց մի քանի կիլոմետր տարածութեան վերայ՝ հակառակ ուժեղ քամու պատճառով:

Պատմում էին, որ մի նաւաստի նետուելով ծովը, որպէսզի շայրուի, բարձրանալով ծովի մակերևոյթի վրայ՝ զարմանքով տեսաւ, որ քաղաքը այլևս չկայ: Այս պատմութիւնը հազիւ թէ չափազանցրած լինի: Այդպէս մի ակնթարթում կատարուեց այդ կատաստրոֆան:

Շրկացած ամպի համար մի ըոպէից էլ աւելի բիչ ժամանակ էր հարկաւոր, որպէսզի կատարի իւր կործանիչ թոխքը և ամայութիւն առաջ բերէ. քաղաքի մեծ մասը, որ ամենից աւելի մօտ էր հրաբլրխին՝ բոլորովին անյայտացաւ, դանաւով ալիքաձև հարթութիւն, ծածկուած հրաբլրխային բեկորներով: Սեն-Պիերի ֆուցիտալ մասը աւերակ էր

զարձած և ներկայացնում էր մի անպիսի կրակարան. քաղաքի ամբողջ բնակչութիւնը, այսինքն՝ 2800 հոգի դիակնացած աւերակների մէջ մնացին: Նրանք, որոնք սպանուած չէին՝ մեռան ջրայի նիւեղբոյ գտնուելից և այրող մոխրից:

Շիկացած ամպի ուղղութիւնը կարելի է գտակ ընդհանուած աների պատերի կործանումից:

Ահա ինչպէս է Ա. Լակրուան նկարագրում տաք ամպը, որ կրկնուել է 1903 թուականի յունուարին. այդ միջոցին Լակրուան դիտում էր նրան մէկ կապէմաւոր *) կառուրից:

... Մենք տեսանք, թէ ինչպէս հրաբլխի գլմբէթից բարձրացաւ մի գունդ, կազմուած մոխրագոյն ոլորտներից, որ զարմանալի արագութեամբ ընթացաւ լեռների ճեղքերով: Սկզբում նա կարծր էր թուում, ինչպէս քար, բայց շուտով սկսեց ուռչել. նրա ոլորտները կազմող մասերը երկրի վերայ շուտ գալով՝ տարածուում էին ամեն ուղղութեամբ: Չանցաւ մի րոպէ, երբ փոքրիկ, գունդը պատի վերածուեց, օրը առաջ էր ընթանում արագ վնացքի արագութեամբ, ունէր աւելի քան երեք հազար մետր բարձրութիւն և շարունակ մեծանում էր երկարութեամբ ու բարձրութեամբ, ընդունելով մթութեան մէջ Փանտաստիկ ուրուագծեր, մինչև որ ծովին հասնելով, 7 կիլոմետր անցնելուց յետոյ, քամուց պատուտուեց ու նոսրացաւ, փոխարինուելով մոխրից սև անձրևի...

Մեր հայեացքներն ու մտքերը դարձան միաժամանակ և՛ մեր ոտների տակ տարածուող Սեն-Պիերի գորշ հարթութեան վերայ և գէպի այն ամպը, որը իւր վսեմ ընթացքով յայտնուել էր մեր առաջ որ-

*) Ամբոցների պատնէշների տակ կառուցուած կամարակապ շինութիւն:

պէս անպութ մահուան մարմնացումն և պարունակում էր իւր մէջ վերջնական լուծումն այն սարսափելի խնդրի, որի ուսումնասիրութիւնը ինձ Մարտինիկ էր տարել:

Ահա հրաբլխային ժայթքումների այդ երկու տիպերը: Նրանցից մէկը, որը պելիակերպ է, բնորոշուում է շիկացած նիւթերի հարուածներից առաջացած կործանման վայրկենական արագութեամբ, մեքենական ուժեղ գործողութիւններով, որ գրեթէ հորիզոնական ուղղութեամբ են տեղի ունենում, առանց գետինը ցնցելու. երկրորդ, սովորական տիպը բնորոշուում է նրանով, որ գոհերը սպանուում են և կամ նրանք խեղդուում են սառը կամ տաք ժայթքող նիւթերից՝ այս գէպըում մեքենական գործողութիւնները ուղղուած են վերևից ներքև, որոնց ընթացակցում է երկրաշարժը: Առաջին տիպը ոչ միայն ջարդում ու սպանում է, այլ և այրում էլ է, այսինքն գործում է ոչ միայն մեքենայական էներգիայով, այլ և տաքով, որով բացատրուում է նրա կործանիչ գործողութեան արագութիւնը: Երկրաշարժի երկրորդ տիպը գործում է ընդհակառակը լոկ միայն մեքենայական ոյժով:

1008
36487

III.

Ի վերջոյ խօսենք էտնայի վերջին ժայթքումի և ընդհանրապէս այս նշանաւոր հրաբլխի կեանքի մասին, որ գտնուում է Մետսինայի երկրաշարժի կենտրոնում:

էտնան ամենաուժեղ հրաբուղիներից մէկն է: Ունենալով ծովի մակերեկոյթից 3313 մետր բարձրութիւն և մօտաւորապէս 140 կիլոմ. շրջապատ, նա երբեմն սարսափելի ժայթքումներ էր անում, 1381

և 1669 թուերին նրա լավայի հեղեղները 40 կիլոմ. երկարութիւն ունէին: 1852 թուականին լավայի հեղեղը հասնում էր մի քանի տասնեակ կիլոմետր երկարութեան և 2500 մետր էլ լայնութեան:

Էտնայի վերին մասը կազմուած է հրաբլխային շերտերից, այսինքն՝ նրա ժայթքումների նիւթերից: Աւելի խորը ընկած են երրորդ շրջանի տկնուցային մնացորդները. նրանց տակը կան մի շարք խաւային շերտեր, որոնք ծագումով երրորդ շրջանից առաջ են, իսկ վերջիններիս տակը նստած են նախասեղծ հատաքարերը (граниты), ծիրանաքարերը (порфириды) և սևակուճիները (базальты):

Տկնուցային խաւերի ներկայութիւնը, որ ծագումով պատկանում է երրորդ շրջանին, մասնանշում է այն հանգամանքը, որ Էտնայի հրաբլխային գործունէութեան ծագումը նորագոյն է, նորագոյն՝ իհարկէ երկրաբանական տեսակէտից. ուրեմն՝ Էտնան երրորդ տասարդ հրաբուղի է:

Բոլոր խաւերը, որոնք առաջ են եկել ժայթքումներից կամ տականքներից, կարտուած են շրանցքների ցանցով: Նրանցից մի քանիսը գուրս են գալիս երկրի մակերևոյթի վերայ, կազմելով խառնարաններ ժայթքումի ժամանակ լավան գուրս թափելու: Այդպէս է կենտրոնական խառնարանը, որ ամենաբարդարձակն է իւր մեծութեամբ: Նա կազմում է գլխաւոր խառնարանը, որ բռնում է Էտնայի ամենաբարձրը կէտը: Բայց գլխաւորից զատ գոյութիւն ունին նաև մի քանի կողքի խառնարաններ: Ներկայումս մի քանի խառնարաններ գործունէութիւնից դադարած են:

Կան և շրանցքներ, որոնք դեռ կատարեալ դարգաման չեն հասել, և դեռ գուրս չեն եկել երկրի մակերևոյթը:

Մի քանի երկրաբաններ ենթադրում են, որ Էտնա հրաբլխի ներսում գոյութիւն ունին ահագին այրեր, լցուած ջրային գոլորշիներով և այլ գազերով, որ ունին ջերմութեան բարձր աստիճան. այդպիսի գազերին և գոլորշիներին են վերագրում գիտնականները երկրաշարժի պատճառը:

Ատլանտիդան ու նրա սոսկալի վախճանը

(Մ. Ա. Օրլովի)

Գաստական աշխարհի հնագոյն աւանդութիւններից մէկի ասածին նայելով երբեմն գոյութիւն ունէր մի մեծ կղզի և, շատ կարելի է, մի ամբողջ մայր ցամաք, որ ընկնում էր „Հերկուլեոեան Սիւներից“, այսինքն՝ Զիպրալտար նեղուցից դէպի արևմուտք: Երկար ժամանակ թէ կարճ, գոյութիւն ունեցաւ այդ երկիրը, բայց մի գեղեցիկ օր նա խորտակուեց իւր ամբողջ բարձր կուլտուրական բնակչութեամբ և ընդամիշտ անյայտացաւ Ատլանտեան ովկիանոսի ալիքների տակ: Նա կոչւում էր Ատլանտիդա, և նրա անունով էլ կոչուած է նրան կլանող ովկիանոսը:

Ատլանտիդայի պատմութիւնը գրուած է Պլատոնի ձեռքով և մտել է նրա նշանաւոր զրոյցներից մէկի, այն է՝ „Տիմէի“ մէջ: Այստեղ առաջ է բերւում մի ինչ որ եգիպտական քուրմի խօսակցութիւնը յունաց Սողոն իմաստունի հետ: Եգիպտացին սկսում է յանդիմանել յոյներին նրանց թեթևամտութեան ու ագիտութեան համար, որ իբր թէ նրանք ոչինչ չգիտեն. նրանք հին աւանդութիւնների գիտութեան մէջ համբակներ են. նրանք—իրանց

մասին չգիտեն, որ հերոսների այլասեռուած սերունդ են, որ ինը հազար տարի առաջ մեծ սխրագործութիւններ են կատարել: Եւ այս նախաբանից յետոյ պատուարժան Իգիպոսի քուրմը սկսում է պատմել Սողոմին այն բանի մասին, թէ ինչ էր եղել ինը հազար տարի առաջ: „Մեր պատմագրութիւնների մէջ (այսինքն եգիպտական) խօսւում է այն մասին, թէ ինչպէս Ատլանտեան ովկիանոսի մեծ պետութիւնը խիստ յարձակում գործեց Եւրոպայի և Ասիայի վերայ (որովհետեւ այդ ժամանակներում արդէն կարելի էր ովկիանոսից նաւելով անցնել), և ինչպէս Աթէնացիք քաջութեամբ դիմադրեցին նուաճողների յարձակմանը: Այն ժամանակ գոյութիւն ունէր մի անագին կղզի, որ գետեղուած էր նեղուցի դէմ, որին դուք անուանում էք Հերկուլեսեան Սիւներ: Այս կղզին աւելի մեծ էր, քան Լիվիան և Ասիան մէկտեղ առած (Լիվիան պէտք է հասկանալ հին ժամանակներում Աֆրիկայի հիւսիսային ամբողջ յայտնի մասը): Ատլանտիդայի բնակիչները իրանց կղզուց հեշտութեամբ նաւարկում էին դէպի միւս փոքրիկ կղզիները, որոնք ընկնում էին իրենց կղզու և Եւրոպայի միջև, այնտեղից էլ՝ դէպի մայր ցամաք, որ եզրագծում է այդ ծովը (այսինքն՝ Միջերկրական ծովը): Ատլանտիդայի վերայ կային թագաւորներ, որոնք նշանաւոր էին իրենց զօրեղութեամբ: Նրանք հիմնեցին մի թագաւորութիւն, որի տիրապետութեան տակ էր գտնւում—ամբողջ կղզին և հարևան բոլոր կղզիները: Իսկ մեր գաւառներում (այսինքն, որ միացած է Եգիպտոսի հետ) նրանց իշխանութեան տակ էր գտնւում ամբողջ Լիվիան մինչև Եգիպտոս, իսկ Եւրոպան մինչև Տիրենիա: Այս հօր պետութիւնը մի ժամանակ կենտրոնացնե-

լով իւր բոլոր ոյժերը՝ պատրաստւում էր հպատակեցնել այն բոլոր ազգերին, որ ապրում էին Հերկուլեսեան Սիւներից այս կողմը, որոնց թւում մեր (Եգիպտոսը) և ձեր (Յունաստանը) երկրները: Եւ անա այդ ժամանակ մեր քաղաքը ամբողջ աշխարհի առաջ ցոյց տուեց իր ոյժն ու արիութիւնը: Նա դիմադրեց ամենասարսափելի վտանգներին, նա յարձակուողների վրայ յաղթութիւն տարաւ. նա ազատեց ստրկութիւնից ոչ միայն իրան, այլև ուրիշ ազգերին, որոնք դեռ ևս նուաճուած չէին Ատլանտիդայի թագաւորութեան կողմից: Եւ անա այդ ժամանակից յետոյ շուտով սկսուեցին սոսկալի հեղեղներ ու երկրաշարժներ: Ատլանտիդայի ամբողջ զօրքը, որ մեզ վրայ էր գալիս՝ մէկ օրուայ և մէկ գիշերուայ ընթացքում ձեղքուող գետնի մէջ կուլ գնացին: Ինքը Ատլանտիդա կղզին էլ անյայտացաւ ջրի տակ: Ահա հէնց դրա պատճառով դեռ այժմ էլ այնտեղ, ուր նա էր գտնւում, չի կարելի նաւարկել ծովով և հետադառնել նրան: Այդ տեղերում նաւերի երթևեկութիւնը խանգարում են անագին քանակութեամբ տըղմեր, որը կղզին թողեց ջրի մէջ ընկզմելով ծովային ալիքների տակ“:

Որովհետեւ ոչ մի տեղ Ատլանտիդայի յետքերը չերևցին, դա ինքնբնութեան հասկանալի է, որ յունաց փիլիսոփայի այս պատմութեամբ վերայ նայում էին իբրև առասպելական պատմութեան վերայ: Սակայն այդ բանի հիմք կարող էր ծառայել երկրաբանական այդ սարսափելի շփոթութիւններից մէկը, որ յաճախ կատարւում են ժամանակակից մարդկութեան աչքի առաջ: Յիշենք գոնէ Մարտինիկ կղզու վերայ գտնուող Սեն-Պիերի կորստաբեր վախճանը, կամ թէ մեզանում, Ռուսաստանում, Շամախի

և Վերնա քաղաքների կործանումը: Եւրոպայի գիտնականները եզրիպտական այդ պատմութեանը վերաբերուեցին անհոգ կատակներով: „Իմ ճանապարհորդութեան ժամանակ, — ասում էր Հումբոլդը, — ես ոչ մի տեղ նրան (այսինքն Ատլանտիդային) չպատահեցի“: Սա նշանաւոր գիտնականի մի տարօրինակ կատակն է: Ինչպէս կարող էր նա պատահել այն բանին, ինչ որ անյայտացել էր սրանից տասը հազար տարի առաջ... Միւս գիտնականները երբէք չհրապուրուելով այդ լեզուներով և ոչինչ չհաստատելով մատնանըշում էին սակայն այն գուգաղբիութիւնը, որով իրականութիւնը համապատասխանում էր եզրիպտական աւանդութեան մի քանի հանգամանքներին: Այսպէս՝ շէտացի երկրաբան Գէյերը, որ մասնագէտ է պալէօնտոլոգիական բուսաբանութեան մէջ, համեմատելով պեղած բոյսերը, որոնք գտնուել են Ամերիկայում և Շվեյցարիայում, նրանց մէջ այնպիսի նմանութիւն էր նկատել, որը, նրա կարծիքով, մեզ բերում է այն եզրակացութեան, որ այդ երկրները մի ժամանակ իբար հետ միացած էին և կազմում էին մի մայր ցամաք: Բեկլին միևնոյն հիմքերի վերայ նոյն կարծիքին է և մինչև անգամ ուղղակի թոյլ է տալիս ենթադրելու, որ այն պարանոցը, որը կապում էր երկու ցամաքները Եւրոպան և Ամերիկան, եղել է հէնց առեղծուածային Ատլանտիդան: Սակայն մեր տեսութիւնը լրացնելու համար պէտք է աւելացնել, որ ուրիշ գիտնականներ ծայրայեղութեան մէջ էին ընկնում, — „հրապուրում էին“ Ատլանտիդայով և յաճախ յատկացնում էին նրան մի որոշ տեղ երկրագնդի վերայ: Այսպէս Բուդբէզը յամառութեամբ պնդում էր, որ Ատլանտիդան ոչ այլ ինչ է, բայց եթէ Սկանդինաւեան թերակղզին: Ֆրանսիայի Լատ-

րէյը տեղաւորում էր նրան ժամանակակից Պարսկաստանի մէջ. Դէ-Բերը ընդունում էր Սոդոմ և Գոմորի տեղ. Բայլին-Մոնդոլիայում: Այստեղ առաջ եկաւ միևնոյն պատմութիւնը, ինչ որ Աստուածաշնչի դրախտը: Նրան տեղաւորում էին և Սահարայում, և Սպանիայում և մինչև անգամ հիւսիսային բևեռում:

Սակայն գրողների մեծ մասը, որոնք հետաքրքրում էին Ատլանտիդայով, նախապատիւ համարեցին եզրիպտական աւանդութեան ճիշտ մատնանշած սահմաններից դուրս չգալ: Այստեղ Ատլանտիդայի տեղը պարզ մատնանշած է Հերկուլեսեան Ալիւներից դէպի արևմուտք: Այս պատճառով Եւրոպայի գիտնականներին ամենից աւելի հաճելի էր տեսնել Ատլանտիդան Ամերիկայում, նրա մայր ցամաքի զանազան մասերում: Այս կարծիքին էին՝ Օլիւտը, Բիւֆոնը, Մակ-Կուլօխը և Դէ-Պաուսը: Ոչ պակաս տրամաբանօրէն գտնում էին և նրանք, ովքեր ցոյց էին տալիս Ատլանտիդայի տեղը Եւրոպայի և Աֆրիկայի ավերում:

Ընդունենք, որ Եզրիպտական աւանդութիւնը իւր ընդհանուր բովանդակութեամբ ճշմարիտ է և յենւում է պատմական ապացոյցների վերայ, որի մէջ, — սրա հետ ամեն ոք կհամաձայնի, — ոչինչ չկայ անհաւանական: Եթէ Ատլանտիդան իսկապէս գոյութիւն է ունեցել, ապա չէ՞ր կարելի արդեօք որոշ չափով մատնանշել նրա տեղը Ատլանտեան ովկիանոսում: Նա եղել է ըստ եզրիպտական աւանդութեան Զիպուրալտարի նեղուցից դէպի արևմուտք. կնշանակէ թէ՛ նրա տեղը Ատլանտեան ովկիանոսի մէջտեղն է նրա տարածութիւնը Սպանիայի, Ֆրանսիայի, Մարոկկոյի, Իրազելիայի և միջին Ամերիկայի մէջ տեղումն է:

եթէ այդպէս է, ուրեմն ամենից առաջ մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ Աֆրիկայի եզերքի այժմեան կղզիները ինչպէս են. Ագսրիան, Մատէյրա, Քանարեան, Կանաչ հրուանդանի ու Անտիլեան, ներկայացնում են Ատլանտիդայի մնացորդները, որոնք չեն գնացել ջրի տակ, ծովի մակերևոյթից ունեցած իրանց համեմատական բարձրութեան շնորհիւ. նրանք ջրի միջից այժմ դուրս են ցցուած, ինչպէս նաևի կայմեր, որ ընկղմել է ծովի ծանծաղ տեղում:

Այժմ գինուինք Ատլանտեան ովկիանոսի լաւ քարտէզով և տեսնենք, թէ ինչպիսի ձև ունի նրա յատակը, որտեղ է նրանում խորութիւնները ու ծանծաղուտները. այս վերջիները կարող էին համապատասխան լինել այն տեղերին, որտեղ գետեղուած էր խորտակուող Ատլանտիդան: Եւ ահա մենք տեսնում ենք, որ մօտաւորապէս հիւսիսային լայնութեան երեսուն ու յիսուն զուգահեռականների մէջ տարածւում է համարեա մի շարք անընդհատ ծանծաղուտ տեղեր, քարեր, ժայռեր, ջրի տակ գտնուող մեծ ու փոքր կղզիներ: Դժբաղդաբար ծովի յատակը մանրամասն հետազոտուած է միայն նաւարկութեան ճանապարհի ուղղութեամբ, իսկ այն տեղերը, որոնք այս ճանապարհի գծից դուրս են՝ թողած է գրեթէ առանց չափելու: Յետոյ ջրի տակ գտնուող ահազին բարձրութիւնների շարքը տարածւում է Պորտուգալիայի եզերքներից մինչև Մադէյրա կղզին: Այս ծովի տակ գտնուող լեռնաշղթայի ստորոտը կեցած է 400 սաժէն միջին խորութեան, իսկ գագաթը 70 սաժէն խորութեան վերայ: Այս ընկղմած կղզին լաւ յայտնի է ծովագնացներին: Յետոյ Ազորեան կղզիների շուրջը, որ կրկին ծովի յատակի բարձրութեան շրջանն է կազմում, ցրուած են բազմաթիւ աչքի ընկնող հաւա-

սար բարձրութեամբ փոքրիկ կղզիներ: Նիւֆաունտլէնտից դէպի արևելք գտնւում են նոր շարքեր, որոնց գագաթի վերայ ջուրը կանգնած է ոչ աւելի քան 150 սաժէն: Մենք տեսնում ենք, որ Ատլանտեան ովկիանոսի յատակի վերայ, Նիւֆաունտլէնտի, Եւրոպայի և Աֆրիկայի եզերքներում գտնուող կղզիների միջև տարածւում են շատ նշանաւոր ծովայատակի բարձրութիւններ: Եւ այսպէս, եթէ այստեղ երբևիցէ կատարուել է երկրաբանական կատաստրոֆա, եթէ, ծովի յատակը իջել է և ջրի տակ գնացել մի ամբողջ մայր ցամաք, ուստի պէտք է եզրակացնել, որ այդ մայր ցամաքը սուզուել է Եւրոպայի ափերի, Աֆրիկայի եզերքներում գտնուող կղզիների և Ամերիկայի ափերում ընկած Անտիլեան կղզիների միջև: Մայր ցամաքը չափազանց մեծ է եղել և, կարող է պատահել, բռնում էր այժմեան Մեկսիկայի, մինչև Ամազոնի գետաբերանը հասնող Հարաւային Ամերիկայի, Եւրոպայի հարաւային եզերքի և Աֆրիկայի հիւսիսային ափի միջև գտնուած ամբողջ տարածութիւնը:

Ատլանտեան ովկիանոսը հետազօտելիս անհրաժեշտ է նոյնպէս առանձին ուշադրութիւն դարձնել Սարգասեան ծովի վերայ: Յիշեցնենք երկու խօսքով թէ այդ անուան տակ ինչ է հասկացւում: Սարգասեան ծով կոչւում է Ատլանտեան ովկիանոսի հէնց այն մասը, որը ամենալաւ կերպով կարող էր համապատասխան լինել Պղատոնեան Ատլանտիդայի տեղին: Ովկիանոսի այս մասում բռնում են ահագին ժայաւէնածէ ծովասէզներ, ֆուկուսի ընտանիքից և աւելի յաճախ sargassum-ի սեռից. այստեղից է առաջ եկել Սարգասեան ծովի անունը: Այստեղ, այս հսկայական վիթխարի ծովասէզները աճում են այնպիսի առատու-

թեամբ, այն աստիճանին նրանցով լեցուած է ողջ ծովը, որ դրանց պատճառով նաւարկելը անկարելի է: Ամերիկայի գտնուելուց շատ դարեր յետոյ ծովազնացները խիստ վախենում էին այդ տեղերից և որքան կարելի է խուսափում էին նրանցից. այնպէս էին կարծում, որ եթէ փոթորիկը տանէր նաւը այդ թփուտների մէջ, այն ժամանակ նա անխուսափելի— օրէն կը կորչէր, խրճճուելով վիթխարի ու ամուր արօտի մէջ: Արդեօք այս այն տեղը չէ, որ հնումը համարում էին „տղմով“ լցուած, որի մասին յիշուած է Պրատոնի պատմուհացքի մէջ: Եթէ այստեղ խիտ բնակուած տեղ լինէր և նա խորտակուէր ծովի տակ, այն ժամանակ իհարկէ կատացուէր պարարտ յատակ, որը կարող էր սկիզբ տալ ճոխ բուսականութեան, որ մնում էր կղզու հետոյ միասին ովկիանոսի մէջ կլանուած կենդանի, գործարանաւոր մարմինների մնացորդներով: Այս միաքը չափազանց հրապուրիչ է: Ներկայումս Սառգասեան ծովը շատ է նեղացել, առաջուանից աւելի փոքրացել, որ յամենայն դէպս հասկանալի է.— դարերի ընթացքում հողը անբերրի է դարձել և չի կարողանում արտադրել նախկին ճոխ բուսականութիւնը: Բայց կատարել են մի դիտողութիւն, որը հակառակ է այս եզրակացութեան: Սառգասեան ծովի ծովասէզները իբր թէ աճում են ոչ թէ այն յիշեալ տեղում, այլ ովկիանոսի ամեն մի ծայրերից այստեղ են բերւում շնորհիւ ծովային հոսանքների, և մի տեղ են հաւաքուած: Եթէ այդ այդպէս է, ապա պէտք է այս ամենը ուշադրութեամբ ստուգել: Սակայն ենթադրենք, որ Ատլանտիդան գոյութիւն ունէր, որ նա գեաեղուած էր այժմեան Սառգասեան ծովի տեղում, այսինքն՝ 15—35⁰ արևմտեան երկարութեան (Փարիզից) և

10—15⁰ հիւսիսային լայնութեան միջի տարարածութիւնն էր բռնում: Հետաքրքիր հարց է ծագում.— Ազորեան, Կանարեան և Անտիլեան կղզիներից գատ, նրանից (Ատլանտիդայից) ուրիշինչ մնաց: Գլխաւորը՝— Ատլանտիդայի վրայ ապրող ժողովրդի այս կամ այն մնացորդները տեսան արդեօք այդ կատասարօֆան: Այս հարցի պատասխանը շատ պարզ և ուղիղ է: Եթէ մեր հաշուած բոլոր կղզիները ներկայացնում են Ատլանտիդայի մնացորդներ, ապա ակներև է, որ նրանց տեղացի բնակիչները Ատլանտիդայի բնակչութեան մնացորդներն են: Երբ Եւրոպացիք առաջին անգամ դուրս եկան այդ կղզիների վերայ, նրանք այնտեղ գտան տեղացիներ, որոնք անկասկած ստլանտիդացիք էին, եթէ միայն նրանց կղզիները իսկկիսկ Ատլանտիդայի մնացորդներն էին: Աֆրիկայի կղզիների տեղացիները իրանց կոչում էին գուանչէ կամ կվանչէ: Բարբարոս նուաճողները սովորաբար ամեն կերպ աշխատեցին ոչնչացնել այդ տեղացի ցեղերին: Ապագայում տեղացի բնակիչները սկսեցին խառնուել նորեկների հետ. այնպէս որ ներկայումս պատահել և ուսումնասիրել գուանչեների մաքուր արպը,— այդ մասին մտածելն անգամ աւելորդ է: Մենք կարող ենք դատել այս ցեղի մասին եղած միմիայն այն տեղեկութիւններով, որոնք պահպանուել են XV-րդ և XVI դարու հեղինակների գրուածքներում: Այս տեսակէտից առանձնապէս արժէքաւոր է մի շատ յայտնի հին երկասիրութիւն հեղինակի վկայութիւնը, որը կրում է հետևեալ վերաառութիւնը. „Degli abiti antichi e moderni di diverse parti del mondo“, այսինքն — „Աշխարհի զանազան մասերի հին և նոր զգեստների մասին“, գտնուած յայտնի աշխարհագրագէտ Կեսար Վեչելլիի ձեռքով, որ մօտ

ազգական էր նշանաւոր նկարիչ Տացիեանին, որը նոյնպէս կրում էր միևնոյն ազգանունը: Վեչելլինի գիրքը զարդարուած է Տացիեանի նկարներով և այդ նկարներին կարելի է հաւատ ընծայել. նրանք պէտք է որ ճիշտ լինին: Հէնց այդ ժողովածուի մէջ մենք գտնում ենք գվանչէի տիպը իր ազգային տարազով: Այս գեղեցիկ մարդկային կերպարանքը լի է արժանաւորութեամբ ու ազնուութեամբ: Առանձնապէս զարմանալի է թէ ինչպէս այդ կերպարանքը իւր բոլոր մանրամասնութիւններով նման է ամերիկական տիպերին, որ գետեղուած են նոյն գրքում. Պերուանցիները, Մեկսիկացիները, Ֆլորիդացիները և ուրիշ ազգերի հետ:

Իսպանացիները, որոնք յայտնուեցին Կանարեան կղզիների վերայ, ապշած մնացին, որ այդ «բարբարոսների» մէջ տեղացիներ գտան: Նրանք, ինչպէս երևում է, ամենահին ժամանակներից սկսած ունէին գրաւոր յիշատակարաններ, ուսումնասիրում էին աստղաբաշխութիւնը: Նրանք գմուտում էին իրանց ննջեցեալների դիակները և ըստ երևոյթին, ամենանուրբ կերպով կատարելագործում էին իրանց նախորդների պաշտամունքները և հանդերձեալ կեանքի վարդապետութիւնը: Նրանք բուրգերի ձևով էին շինում գերեզմանները: Նրանց մէջ, ինչպէս և Հռովմում, կար Վեստա շաստուածուհու կուսակրօն քրրմուհիների մի կասա: Երկրագործութիւնը նրանց մէջ կրօնական ծէսերի կարգն էր անցած: Նրանք սովորել էին շինել երաժշտական գործիքներ, սիրում էին երաժշտութիւն, երգեցողութիւն պարեր, և առհասարակ զանազան ուրախութիւններ:

Այն ժամանակուայ գրողների խօսքին նայելով գուանչէները ինքեանք համարում էին իրանց մի

ինչ որ ամենահին ազնիւ ցեղի սերունդների և կրտուած լինելով մնացած աշխարհից, ապրելով ովկիանոսի միջում, նրանք բնականաբար իրանց համարում էին երկրագնդի միակ բնակիչները: Միւս բոլոր ազգերը, որոնք առաջ էին ապրում, ըստ նրանց ժողովրդական աւանդութեան՝ շատ վաղուց, անյիշելի ժամանակներում կորան մի ինչ որ սոսկալի կատաստրոֆայի ժամանակ, որ ամայացրեց ամբողջ երկիրը: Նրանց մտքում այդ կատաստրոֆայի մասին մնաց մի այնպիսի անմոռանալի և խիստ մըռայլ յիշողութիւն, որ մինչև անգամ նրանց սովորութիւնների վերայ ևս անդրադարձաւ. նրանք, օրինակի համար՝ չունէին ոչ մի տարեգրութիւն, խորապէս համոզուած լինելով, որ համաշխարհային այդ կատաստրոֆան վաղ թէ ուշ նորից պիտի կրկնուի, և ամեն տեսակ տարեգրութիւնները միևնոյնն է պիտի կորչեն:

Դա չէ՞ ապացուցանում արդեօք Ատլանտիդայի գոյութեան մասին եղած տեղեկութիւնների ճշտութիւնը, Ատլանտիդայի, որ կուլ գնաց ի վերջոյ ովկիանոսի ալիքներում:

Կվանչէները տիպով կարելի է վերականգնել Ատլանտիդայի նախկին բնակիչների տիպը: Այդ տիպերը ուսումնասիրելիս մի կողմից երևան է գալիս նրանց նմանութիւնը ամերիկացոց հետ, իսկ միւս կողմից՝ եգիպտացիների: Ամերիկացիների և Կանարեան կղզիների վերայ ապրող տեղացիների միջև եղած նմանութիւնը միանգամից նկատելի էին դեռ ևս այս կղզիներն եկող առաջին նաւագնացներին: Նրանք իրանց առաջ տեսնում էին նոյն արտաքին դէմքի գծերը, գրեթէ նոյն լեզուն, նոյն սովորութիւնները և կեանքի նոյն ձևերը: Կվանչէները և, օրի-

նակի համար՝ Հաիթի տեղացիները լեզուները մէջ կարելի է գտնել շատ բոլորովին միմիանց նման խօսքեր, մանաւանդ աշխարհագրական անունների մէջ: Բայց չէ՞ որ եթէ Ատլանտիդան տարածուած էր մինչև Ամերիկա, ապա կնշանակէ, թէ ամերիկայի ցեղերի, օրինակի համար՝ մեկսիկացիների (ացտեկները), բերուանցիների (ինկաները) կեանքի եղանակի և կուլտուրայի մէջ կարելի է Ատլանտիդայի կուլտուրայի հետքերը գտնել: Իսկ ամերիկացիների քաղաքակրթութիւնը, ինչքան էլ իսպանացիք աշխատէին ոչնչացնել նրան երկրի երեսից, այնուամենայնիւ մեզ յայտնի է մի քանի մանրամասնութիւններ: Ինկաները և ացտեկները ըստ կուլտուրական զարգացման բարձրութեան կարող են դրուել եգիպտացիների հետ մէկ մակերևոյթի վերայ: Ամերիկացիների լեզուներին նայելով, որ իսպանացիներն էին հաղորդել (օր. Լանտէ և Պերրերը), որ Ի.գաթանի սկզբնական բնակչութիւնը բաղկացած էր եկուորներից, որոնք արևի ծագած կողմից առաջ եկան, այսինքն Ատլանտիդայից: Մոնղեսուժան ասում էր իւր նուաճողներին, որ նրա նախորդները Մէկսիկայի բնիկներ չեն, այլ եկել են մի «հարուստ երկրից», որ տարածուած է արևելքում: Այս երկիրը ացտեկները կոչում էին Աստլանդ: Այս անունը նշանակելու համար նամակի վերայ գործ էին անում մի բարդ նշան, որի մէջ մտնում էր մի պատկերագիր, որ ջուր էր նշանակում: Վերին աստիճանի հետաքրքիր եզրակացութեան ենք գալիս, երբ համեմատում ենք ատլանտիդացիներին հին եգիպտացիների հետ: Մարդիկ տեսնելով և ուսումնասիրելով ամերիկայի հնութիւնների մնացորդները, այնուհետև տեսնելով եգիպտական հնութիւնները՝ միշտ ապշած են մնում,

նկատելով նրանց մէջ եղած նմանութիւնը, առանձնապէս նկարչութեան մասում: Եգիպտոսի նկարչները կարծես թէ արտանկարում էին իրանց պատկերները հարաւային ամերիկացիների նկարներից: Հումբոյլդին ապշեցնում էր հին եգիպտացոց և Մեկսիկայի կոնանց մազերի հիւսուածքների նմանութիւնը: Մի քանի հարաւային ամերիկացիների տեղացի ցեղերի կոնայք մինչև այժմ կրում են նոյնպիսի դեղին, նեղ և ոտներին փաթաթուող շրջագգեստներ, ինչպիսիները կրում էին հին եգիպտոսի կոնայք: Եգիպտացիների և ացտեկների թագման սովորութիւնները ոչ միայն նման են, այլ համարեա միակերպ են. երկու երկրներում էլ մենք գտնում ենք գմուսում, դիակները թանկագին գործուածքների մէջ փաթաթելը, ազգականների և ճորտերի թաղումը իրանց թագաւորների գերեզմանների շուրջը և այլն: Մինչև անգամ մեքսիկացիների ու եգիպտացիների գերեզմաններն էլ նոյնն են. թէ այստեղ թէ այնտեղ բուրգեր են և միաժամանակ միևնոյն ձևով դասաւորուած աշխարհի կողմերի նկատմամբ: Մեքսիկացիների վիթխարի քարէ գլուխները շատ նման են եգիպտական սֆինքսների գլխներին:

Եթէ եգիպտացիների ու մեքսիկացիների քաղաքակրթութիւնը միատեսակ էր, ապա հարց է, թէ այդ քաղաքակրթութիւնը որ տեղից ուր է անցել: Արդեօք եգիպտացիներից մեքսիկացիներին, թէ հակառակը: Ո՞վ ում վրայ արշաւանք գործեց, ո՞վ յաղթեց, ո՞վ միւսին հարկադրեց ընդունել իւր կուլտուրան: Եթէ ընդունենք Ատլանտիդայի գոյութիւնը, այն ժամամանակէ երկու քաղաքակրթութիւնների ծագումը գրոնում է ուրիշ աւելի բնական բացատրութիւն: Ահա զին Ատլանտիդ մայր ցամաքը ծառայում էր

իրբ բուն կենսորոն, որտեղ ծնունդ առաւ հին քաղաքակրթութիւնը և որտեղից նա տարածուեց դէպի արևմտեան Մեքսիկա, Պերու և դէպի արևելք — մինչև Եգիպտոս: Գուցէ Ատլանտիդայի խորտակումից շատ դարեր անցնելուց յետոյ Մեքսիկան և Եգիպտոսը համարուում էին Ատլանտիդայի այնպիսի մնացորդներ, ինչպիսիք են՝ Քանարեան, Ազորեան և Անտիլեան կղզիները:

Այն ամենը, ինչ որ մեզ յայտնի է, բերում է այն եզրակացութեան, որ հին Ատլանտիդայից, եթէ նա գոյութիւն է ունեցել, մնացել է միայն մի բոյն, որ սրբութեամբ պահպանում է իւր երկրի վաղեմի աւանդութիւնները: Դա՛ Եգիպտոսն է: Նա Ատլանտիդայի ամենախոշոր և ամենածաղկած գաղութն էր, նրա իսկական ստեղծագործութիւնը: Ատլանտիդայից գաղթողները եկան այստեղ, Նեղոսի ափերը, որ մերկ էր ու անբերրի, փոխեցին մեծ գետը Սահարայի գետաբերանից և ուղղեցին նրան դէպի ներկայիս դելտան: Կարելի է կարծել, որ Սահարան այն ժամանակ ծածկուած էր ովկիանոսի ջրերով, և որ Նեղոսը թափուում էր այդ ծովը այժմեան Փաշուրի տեղում, որի համար քիչ մնաց որ Ֆրանսիացիք անգլիացոց հետ կուռէին: Երբ Ատլանտիդան խորտակուեց, եգիպտացոց բուրմերը գրեցին և պահպանում էին տաճարների մթութեան մէջ իրանց սկզբնական հայրենիքի աւանդութիւնները: Ահա այստեղից կարող էին Ատլանտիդայի մասին տեղեկութիւններն ստանալ Պղատոնը և ուրիշ կրթուած յոյներ, որոնք մօտ յարաբերութեան մէջ էին եգիպտացոց բուրմերի հետ:

Միջին Ամերիկայի հնդկական կիչէ (կամ գուլչէ) ցեղի մէջ գոյութիւն ունի մի լեգենդա, գրուած Լանդայի ձեռքով, որը կարող էր ներկայացնել Ատ-

լանտիդայի խորտակման բանաստեղծական պատկերը: «Ջրերը բարձրացան, — ասում է այս լեգենդան, — և տեղի ունեցաւ մեծ ջրհեղեղ, որ բարձրացաւ բնակիչների գլխներից վեր: Թանձր ձիւթը թափուում էր երկնքից: Երկրի երեսը մթնեցաւ և սկսեց անձրև, անձրև ամբողջ օրը և անձրև ամբողջ գիշերը: Եւ գլխավերևում սկսուեց մեծ աղմուկ: Մարդիկ նետուում էին դէպի ամեն կողմեր և հրհրում իրար լի յուսահատութեամբ: Նրանք տների վրայ էին ելնում, իսկ աները քանդուելով տանում էին նրանց իրանց հետ. նրանք բարձրանում էին ծառերի վրայ, իսկ ծառերը նրանց իրանց վրայից թափ էին ալլիս և հեռու էին գցում: Նրանք մանում էին այրերի մէջ, բայց այրերն էլ քանդուում էին նրանց գլխի վերայ»:

Հետաքրքրական է եգիպտական պատմուածքի մէկ մանրամասնութեան զուգադիպութիւնը, որ առաջ էինք բերել մեր տեսութեան սկզբում և այս հնդկական լեգենդայի մէջ:

Հաս ու կտոր տեղեկութիւն կայ այն մասին, որ կատասարոֆան սկսուել է ցերեկով և շարունակուել է ամբողջ այդ օրը և գիշերը: Այդ մի օրուայ ընթացքում անհետ կորաւ մի ամբողջ մայր ցամաք, թաղուեց մի անագին, չաւանականօրէն խիտ բնակչութիւն ունեցող երկիր:

Սրանից տասը տարի առաջ, 1902 թուականին մենք սարսափում էինք Մարախնիկեան կատասարոֆայից, բայց այնտեղ կորաւ մի փոքրիկ քաղաք, փաստեց մի աննշան կղզի: Իսկ այն ժամանակ կորաւ մի ամբողջ մայր ցամաք և ամենայն հաւանականութեամբ, բազմամիլիոն մի ժողովուրդ:

ԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ՄԱՍՐ.

(Դ. Շենքերգ).

Աշխարհագրութեան դասագրքերում, հանրամատ-
չելի գիտական գրականութեան մէջ, վերջապէս հա-
սարակութեան շրջաններում աիրում է այն համոզ-
մունքը, թէ երկրի ներքին մասը լցուած է հրահե-
ղուկ լաւայով, այն լաւայով, որ ժամանակ առ ժա-
մանակ արտավիժում է հրաբլխային լեռներէրց: Այս-
պիսով հասարակութեան աչքում երկրի ներքին մա-
սի հարցը որպէս թէ արդէն վճռուած է համարոււմ:
Այնինչ գիտնականները համար այս վաղեմի հարցը,
որ հին է ինչպէս ինքը երկրագիտութիւնը, մնում
է առաջուայ նման վիճելի, իսկ վերուում առաջ բե-
րուած այդ հարցի վճիռը՝ սակաւ հաւանական: Այդ
աչքի առաջ ունենալով՝ անհետաքրքիր չի լինի, որ
ծանօթանանք թէ ինչպէս են աստիճանաբար կազմուել
ու գարգացել մի շարք կարծիքներ երկրի ներքին
պարունակութեան մասին և թէ ներկայումս գիտու-
թիւնը ինչպէս է վերաբերոււմ այս հարցի նկատմամբ:

Հէնց որ մարդ երկրի յատկութեան մասին ըս-
կսել է խորհել, նրա մէջ պէտք է ծնուէր մի հարց, —
ի՞նչ է գտնուում նրա ստների տակ, աւելի խորը,
երկրի ներսում: Այս հարցին տուած առաջին պա-
տասխանները մեր անհասունացած խելքով և գիտու-
թեան անբաւարար պաշարով, մեր տեսակէտից շատ
միամիտ պէտք է լինէին: Երկնքի տակ գտնուող տա-
րածութիւնները, և երկրի խորքերը, երկուսն էլ հա-
ւասարաչափ անիմանալի, երեւակայութեան կատարեալ
սզատութիւն էին տալիս և ծառայում էին իբր բնա-
կավայր ամեն տեսակ բարի ու չար ոգիներին: Մինչ-
դեռ երկնակամարի տակ գտնուած տարածութեան

մէջ բնակուում էին լուսաւոր և բարի ոգիներ, երկրի
մուայլ խորքերին բաժին էին ընկնում չար, այլան-
դակ ոգիներ, այսինքն խաւարի իշխանութիւններ:
Երկրի այս խորքերի յատկութեան մասին սկզբնա-
կան մարդը եթէ խորասուզուէր էլ, պիտի կազմէր այն-
պիսի անհաւատալի երեւակայական ենթադրութիւններ,
որոնք գիտական տեսակէտից մեզ համար առանձնա-
պէս հետաքրքրական չեն:

Սկզբնական առաւել իրական տեղեկութիւնները,
թէ ինչ հասկացողութիւններ ունէին հին ազգերը
երկրի ձևի ու ներքին բովանդակութեան մասին, —
մենք գտնում ենք բաբելոնացոց մէջ, որտեղից այդ
հայեացքները ժամանակի ընթացքում անցան հին
հրէաներին: Նրանք երկիրը երեւակայում էին տափա-
րակ, որը լողում էր սկզբնական ովկիանոսում: Երկ-
րի ու նրա վրայ եղած ովկիանոսի վերայ գտնուում
էր նաև երկնային ովկիանոս: Որպէսզի հնարաւոր լի-
նի բացատրել արևի մայր մտները, որ չէր կարող իջ-
նել ովկիանոսի մէջ, այլկերպ նա կը հանգչէր, բա-
բելոնցիք երկրի հիւսիսային կողմում երեւակայում էին
մի լեռ, որի յետևում արեգակը ծածկոււմ է: Չմե-
ռային և ամառային օրերի անհաւասարութիւնը շատ
պարզ բացատրուում էր մեծ կամ փոքր չափով արևի
մուտքը կոնաձև լեռան յետևը:

Յոյների հնագոյն հայեացքները շատ հեռու չը-
գնացին այս սկզբնական հայեացքներից: Հոմերոսը
առաջուայ նման համարում էր երկիրը ովկիանոսում
լողացող տափարակ շրջան: Անախիմէնը մի քիչ ձևա-
փոխեց Հոմերոսի հայեացքը: Նրա կարծիքով երկիրը
տափարակ ձևով, դէպի հարաւ թեքուած մակերևոյ-
թով լողում էր ոչ թէ ջրի վրայ, այլ իւր ծանրու-
թեամբը խտացած օդում գատարկ երկնային գնալի

ներսում: Երկրային մակերևոյթը նրա կարծիքով կազմուած է լեռնային շերտերից, բայց կտրուած է շրանցքների, ձեղքուածների ու այրերի ցանցով, որոնց վրայով կարող են շրջան առնել ջուրը, օդն ու կրակը:

Յոյները հայեացքը երկրի յատկութեան մասին, իր զարգացման ամենաբարձր աստիճանին հասաւ յանձին Արիստոտէլի, որ հաստատուն գաղափար էր կազմել երկրի գնտածե լինելու մասին: Արիստոտէլը երկիրը նմանեցնում էր կենդանու օրգանիզմի, երկաշաղկում էր երկրի ներսը որպէս օջախ, որը պատրաստում է միշտ ջուր, քամի, կրակ ու օդ: Այս ներքին քիմիական աշխատանոցից դրա համար սկիզբ են առնում աղբիւրները և գետերը, այգետից էլ վերանորոգւում է օդը, գուրս է փչում քամին, իսկ հրաբլխային տեղերում կրակը:

Հին կուլտուրայի անկման հետ մէկտեղ մոռացութեան ենթարկուեց և Արիստոտէլի ուսուցումը երկրի ձևի ու նրա միջուկի մասին, և եկեղեցու հայրերը դարձան հին հրէաների հայեացքներին, այսինքն՝ երևակայեցին երկիրը տափարակ և ովկիանոսում լողացող: Միայն արաբները և նրանցից յետոյ միջին դարու Եւրոպական գիտնականները նորից սկսեցին քարոզել Արիստոտէլի մոռացուած ուսուցումը խիստ հետևելով նրա հեղինակութեանը: Նրանց կարծիքով, երկրի մէջտեղում գտնուում էր կենդրոնական կրակը, որը ստեղծուած էր երկիրը տաքացնելու և մեղաւոր հողիներին բնակավայր ծառայելու համար: Այդ օջախի ներս մտնելու անցքը կազմում են հրաբուլխները: Այս հանգամանքը հիմք ընդունելով Էտնայի խառնարանում ուխտաւորներին ցոյց էին տալիս գոխբի կտորը, իսկ այն աղմուկը, որ լսում էր այնտեղից, տանջուող մեղաւորների ազդակների ու հառաչանք-

ների տեղ էր ընդունւում: Էտնայի խառնարանով գոխբ իջաւ նոյնպէս և մեծ բանաստեղծ Պանտէն:

Երկրի քիչ խոր շերտերում այս տեսութեան համաձայն գտնուում են շրամբարներ, բայց ջուրը նրանց մէջ չի մշակոււմ ինչպէս մտածում էր Արիստոտէլը, այլ հոսում է ովկիանոսներից երկրի տակ գտնուող գետերով: Այն տեղում, որտեղից սկիզբ են առնում այդ գետերը, ովկիանոսի մակերևոյթի վերայ կազմոււմ են յորձանուտներ: Ներսի շրամբարներից, որոնք մանաւանդ շատ են լեռների տակ, սկիզբն են առնում աղբիւրները և իսկական գետերը, որոնք թափոււմ են ծովը և այսպիսով առաջ է գալիս ջրի կատարեալ յորձանուտը ովկիանոսի և երկրի մակերևոյթի մէջ: Դրան ապացոյց ծառայում են այն աղի հանքերը, որոնք գոյացել են ծովի ջրի հողի միջից ծծուելուց ու զտուելուց:

Այս հայեացքները, որոնց կողմն էր կանգնած եկեղեցու և Արիստոտէլի հեղինակութիւնը, համարձակութիւն ունեցաւ շրնդունել միայն Դեկարտ փիլիսոփան: Նա առաջինը եղաւ, որ փորձեց վճռել հարցը երկրի միջուկի մասին նրա բնական կազմութեան տեսակէտից: Նրա կարծիքով՝ երկիրը առաջ եկաւ տիեզերական նիւթի հիւլէների խտացումից, որի մակերևոյթի սառչումից կազմուեց երկրի կարծր կեղևը, իսկ նրա տակ յետագայ սառչումից այն նիւթերը, որ երկրի բաղադրիչ մասերն են կազմում, խմբուեցին իրանց կարծրութեան համեմատ և գետ չսառած հրային միջուկի բոլորտիքը մի շարք կեղևներ կազմեցին: Այսպիսով Դեկարտի թեօրիային նայելով, երկիրը կտրուած դիրքով ներկայանում էր հետևեալ պատկերը. հրային միջուկի բոլորտիքը կազմում է կարծր ու ծանր մետաղեայ կեղև, նրա շուր-

Ղը՝ Ղրային թաղանթ, նրա վերայ՝ օդային թաղանթ, իսկ նրա վերայ էլ՝ երկրային թաղանթ: Բայց վերջինս չորանալով սկսեց ճարճքել և սկսեց ցած թափուել, իսկ նրա մասերը ընկան մետաղեայ թաղանթի վերայ, ճնշելով շուրն ու՝ օդը և կազմեցին լեռներ, ցամաքներ ու ովկիանոսներ: Ահա այս կործանումը համաշխարհային Ղրհեղեղն է:

Դեկարտի խորիմաստ, բայց չափազանց համարձակ հայեացքները երկար ժամանակ չգտան իրանց հետևողներ, բայց մի քանի դարեր անցնելուց յետոյ նորից ընդունեցին այդ հայեացքները միայն մի քիչ ձևափոխուած:

XVII Դարու ընթացքում գեռ շարունակուում էր իշխել Արիստոտելի ուսուցումը:

XVIII Դարում Անգլիայում երևան եկաւ մի նոր տեսութիւն, որը հերքում էր երկրի հրային միջուկ ունենալու փաստը և համարում էր երկրի ներքին մասը Ղրով լեցուած: Եկեղեցու ուսուցման հետ միանալով, որը քարոզում էր, թէ երկիրը կազմակերպուած է սկզբնական Ղրային տղմից, այս տեսութիւնը իւր գլխաւոր ուշագրութիւնը դարձրեց Ղրհեղեղի բացատրութեան վերայ, որն ըստ այս թեօրիայի, չափազանց հեշտ էր բացատրուում Ղրերի հոսումը երկրի ծոցից: Վերջին շերտերից բղխող Ղրերը, աղբիւրները և ստորերկրեայ գետերը չափազանց հասարակ կերպով բացատրուում էին նրանով, որ Ղուրը ծծուում էր երկրի Ղրային միջուկից. իսկ հրաբլրխային ժայթքումները բացատրուում էին երկրի կեղևի ներսում տեղի ունեցող հրդեհներով:

Այս առաւել կամ պակաս հիմնաւորուած տեսութիւնների շարքում միջին դարերում՝ երկրի միջուկի մասին գոյութիւն ունէին աւելի ֆանտաստիկ

հայեացքներ: Դեռ XVIII դարու վերջում ապրում էր մի գիտնական (Լէսլի), որ քարոզում էր, թէ երկրի ներքին մասը լցուած է մթնոլորտի ճնշումից առաջ եկած լուսափայլ օդով: Այդ օդի մէջ իբր թէ շարժուում են երկու մոլորակներ.—Պլուտոն և Պրոգերպինոս: Երկրի կեղևին մօտենալով՝ նրանք իբր թէ առաջ են բերում մագնիսական մրրիկ և երկրաշարժ: Դտնուեցան մինչև անգամ սիրահարներ, որ փորձեցին հաշուել այս մոլորակների ուղիները: Երկրի ներքին կողմի վերայ Լէսլիի կարծիքով էլեքտրական մեղմ լոյսի մէջ թագաւորում է յաւիտենական տաք գարուն, գոյութիւն ունին հրաշալի բուսականութիւն և ուրոյն կենդանական աշխարհ: Երկրի ներսը մըտնելու անցքը, նրա կարծիքով, պէտք է գտնուի հիւսիսային լայնութեան 82⁰ տակ, որտեղից դուրս են գալիս բևեաւփայլերը: Բոլորովին լուրջ կերպով մինչև անգամ արշաւախումբ պատրաստելու հարց էլ ծագեց: Այս ֆանտաստիկ հայեացքի արձագանքից օգտուել է Ժ.Վերնը իւր «Իէսլի երկրի կենդրոնը» կոչուած վէպի համար:

Բայց այն ժամանակուայ գիտնականների մեծ մասը, ինչպէս օրինակ՝ Կիրխերը, Լայբնիցը, Բիւֆֆոնը, և այլք շարունակեցին պաշտպանել այն թեօրիան, որ երկիրը հրահեղուկ զանգուած է պարունակում, ունի մի միջուկ և երկրորդական շատ օջախներ, որոնք միացած են ներքին միջուկի հետ: Երբ XVIII դարու վերջում երկրի միջուկի հրահեղուկ տեսութիւնը հաստատուեց Կանաւ-Լապլասի հանճարեղ ենթադրութեամբ, թէ մեր մոլորակային համակարգութիւնը կազմուած է գազանման շիկացած միզամածից, նա վերջնականպէս դուրս քշեց միւս բոլոր տեսութիւնները և միայն ինքը երկար ժամանակ

սկսեց իշխել գիտութեան մէջ: Այդ իշխող տեսութեան արձագանքները, որի հաստատութեանը XIX դարու առաջին կիսին հազիւ թէ մէկը տարակուսէր, մինչև այժմ պահպանուած են դասագրքերում և հասարակութեան մէջ:

Այսպիսով՝ հետամուտ լինելով երկրի միջուկի մասին եղած հայեացքների զարգացման պատմութեան, գալիս ենք այն անմխիթար հետեանքին, որ XIX դարու երկրորդ կիսին գիտութիւնը դեռ շատ հեռու էր այս հարցը վճռելուց. գիտնականները, ըստ իրանց հայեցողութեան, լցրին երկրի ներսը մերթ օդով, մերթ ջրով ու մերթ կրակով, չկարողանալով յօգուտ իրանց տեսութեան տալ մի որևէ կարևոր ապացոյց: Այս բացատրում է նրանով, որ նրանց հայեացքները հիմնուած էին գրեթէ բացառապէս տեսական դատողութիւնների վերայ, այլ ոչ թէ իրականապէս ապացուցուած փաստերի վերայ: Միայն XIX դարու երկրորդ կիսի դիտնականները զբաղուեցին բնագիտական տուեալների հիմնաւոր ուսումնասիրութեամբ, որոնք հնարաւորութիւն էին տալիս գատելու երկրի ներքին պարունակութեան մասին: Եւ այստեղ էլ երևաց, որ այդպիսի արժանահաւատ տուեալներ դեռ ևս քիչ են, և որ շատ համարձակութիւն է հարկաւոր, որպէսզի այդ տուեալների հիման վերայ հնարաւոր լինի վերջնականապէս լուծել այդ վիճելի հարցը: Այս տուեալների մէջ առաջին տեղը պէտք է տանք երկրի ներսի ջերմութեան աստիճանի աստիճանաբար բարձրանալուն:

Երկրագնդի վրայ ամենուրեք, երկրի արտաքին շերտի տակ, որի ջերմութեան աստիճանը կախումն ունի զրսի օդի տատանումից՝ ջերմութեան աստիճանը թէ ձմեռը և թէ ամառը մնում է նոյնը: Այդպէս,

օրինակի համար՝ Փարիզի Դիտանոցի տակ գտնուող գետնախորշում ջերմաչափը արդէն 120 տարի ցոյց է տալիս միշտ 11,83⁰-C. Քանի աւելի երկրի խորքին է գնում, ամբողջ տարուայ համար այդ մշտական ջերմութիւնը սկսում է բարձրանալ և, իւրաքանչիւր 35 մետր խորութեան վրայ, միջին թուով հասնում է 1⁰C.—ի: Երկրի ներսի ջերմութեան աստիճանաբար բարձրանալը ամեն տեղ միակերպ չէ. նա խիստ փոփոխուում է, կախումն ունենալով ջերմութիւն հաղորդող լեռնային խաւերից, քիմիական ու հրաբոլխային երևոյթներից և ուրիշ դեռ քիչ բացատրուած պատճառներից, բայց յամենայնդէպս, նա գոյութիւն ունի երկրագնդի վրայ, ամենուրեք:

Սրանից մենք պէտք է եզրակացնենք, որ երկրի ներսում գոյութիւն ունի չափազանց բարձր ջերմութեան աստիճան: Եթէ ենթադրենք, որ ջերմութեան աստիճանը երկրի աւելի խոր շերտերում պէտք է բարձրանայ այնպէս արագ, ինչպէս որ ցոյց են տալիս քարածուխի հանքերում արած դիտողութիւնները, այն ժամանակ կենտրոնի մօտ ջերմութեան աստիճանը պէտք է լինի մօտ 200,000⁰C.: Բայց որովհետև կան մի քանի ցուցմունքներ, որ ջերմութեան աստիճանի աճումը խորութեան հետ միասին աստիճանաբար պէտք է միջիջ պակասի, ուստի գիտնականների մեծամասնութիւնը ենթադրում է, որ ջերմութեան աստիճանը կենտրոնի մօտ պիտի հաւասարուի 100,000⁰C.: Բայց այդպիսի եզրակացութեան դէմ երբեմն առարկում են, որ ջերմութեան բարձրացումի նկատմամբ կատարած դիտողութիւնները առայժմ արել են երկրի ոչ շատ խոր տեղերում և որ յետոյ քանի գնում ջերմութեան բարձրացումը դանդաղում է և, կարող է պատահել, որ նոյնիսկ դադար-

րում էլ է: Ճշմարիտ է, Աւստրալիայում Գաքմար արքայազատեր ամենախոր քարածուխի հանքը հասնում է միայն 1596 մետր խորութեան, իսկ ամենախոր շաղափահորերը (буровая скважина) գտնւում են 2000 մետրից մի քիչ աւելի խորութեան վերայ. (Պարուշովիցում շաղափահորը հասնում է 2003 մետր խորութեան. Սիմպլոնեան ստորերկրեայ ճանապարհի ամենախոր տեղը 2176 մետր է): Երկրի շրջապատի հետ համեմատած դրանք ոչ այլ ինչ են, բայց եթէ մանր ճանկուռածքներ, և երկրի միջուկի մասին նրանցով եզրակացութիւն կազմելը շատ վտանգաւոր է: Վերջին ժամանակներս լեհացի գիտնական պրոֆ. Ռուդսկին դրականապէս ընդունում է, որ Չերմութեան բարձրացումը գանդաղում և մինչև անգամ դադարում է, քանի դէպի երկրի խորքն է գնում: Նրա կարծիքով, որ հիմնուած է գուռ տեսական և մատիմատիկական հաշիւների վերայ, Չերմութեան աստիճանը մինչև անգամ կենտրոնում մի քանի հազար աստիճաններից չի բարձրանում (ոչ աւելի քան 5000⁰ C.—ի): Առայժմ՝ երկրի կեղևի Չերմութեան բարձրացման համար ուրիշ ոչ մի ապացոյց չի գրանուած, բացի այն թեօրիան, որով ընդունւում է երկրի միջուկի հրահեղուկ լինելը. մինչև այժմ մանրամասնօրէն պարզուած չեն այն պատճառները, թէ, ինչու Չերմութեան բարձրացումը որոշ տեղերում պէտք է յանկարծ չափազանց դանդաղի կամ մինչև անգամ դադարի. մենք ոչ մի իրաւունք չունենք մերժելու երկրի միջուկի սաստիկ Չերմութիւնը, նամանաւանդ որ իբր ապացոյց այդ բանի ծառայում են տաք աղբիւրները, կէյզերները ու վերջապէս լաւան, որի Չերմութեան աստիճանը 1000 աստիճանից էլ բարձր է:

Երկրորդ ապացոյցը, որ երկրի միջուկի մասին եղած բոլոր տեսութիւնների շարքում պէտք է ուշադրութեան անուրի՝—այդ երկրի բարձր տեսակարար կշիռն է: Մինչդեռ երկրի մակերևոյթի վրայ գտնուող լեռնային շերտերի տեսակարար կշիռը, որի մէջ է մտնում և ջուրը, հասնում է մօտ 2⁰-ի, — ամբողջ երկրի խտութիւնը, ինչպէս այդ ապացուցուած է մի շարք փոխադարձ ստուգող միջոցներով, հաւասար է 5,6⁰-ի: Սրանից հետևում է, որ կենարոնի մօտի նիւթերի խտութիւնը պէտք է լինի մօտաւորապէս 10. (ըստ Հէյլմերտի՝ 11,2, ըստ Լապլասի՝ 10-ը, ըստ Լիվշիցի՝ 9,5), այսինքն՝ երկաթի կարծրութիւնից աւելի պիտի լինի:

Շերտերի խտութեան աճումը երկրի խորքը գնալով պէտք է լինի աստիճանաբար, ուստի, յայտնի երկրաբանագէտ Հէյլմերտի կարծիքով՝ կարելի է երևակայել, որ երկիրը բաղկացած է մի շարք կեղևներից, որոնց կարծրութիւնը աստիճանաբար աճում է 2-ից մինչև 11:

Երրորդ հիմնական ապացոյցը, որ չափազանց կարևոր է երկրի միջուկի մասին գոյութիւն ունեցող բոլոր տեսութիւնների համար, — այդ այն է, որ երկրի ներքին մասը պէտք է որ գտնուի մեծ ճնշման տակ, որ առաջանում է նրա վերայ կիտուած բոլոր շերտերի ծանրութեան գուժարից: Սյա ճնշումը, ըստ Լիվշիցի, երկրի շրջապատի $\frac{1}{5}$ խորութեան վրայ պէտք է հաւասարուի 1,000,000-ի, իսկ կենտրոնում — 5,750,000: Եթէ այդ տուեալները զուցէ և թուան մի քիչ չափազանցրած (ըստ Արրենիուսի երկրի կենտրոնում ճնշումը հաւասար է 3000000-ի) բայց, յամենայնդէպս, նրանք մի մօտաւոր գալափար են տալիս այն մասին, թէ ինչ ահագին ճնշում-

ների հետ գործ ունինք, երբ մօտենում ենք երկրի ներքին մասի հարցի լուծմանը:

Եւ այսպէս, երկրի ներքը պէտք է լինեն չափազանց բարձր ջերմութեան աստիճաններ, մինչև 100,000°C, սաստիկ ճնշումներ (մինչև 3000000-ի), իսկ նիւթերի տեսակարար կշիռը պէտք է, հասնի 11-ի: Ահա մօտաւորապէս այն ամէնը, ինչ որ աւելի կամ պակաս չափով որոշակի յայտնի է որի հիման վերայ կառուցւում են բոլոր նորագոյն տեսութիւնները երկրի միջուկի մասին. սակայն, բացի այս փաստերից այդ տեսութիւններից իւրաքանչիւրը յօգուտ իւր բերում է նաև մի շարք աւելի կամ պակաս չափով ապացուցուած ենթադրութիւններ ու դիտողութիւններ:

Մարմինների երեք դրութիւնների համաձայն՝ բոլոր նորագոյն տեսութիւնները երկրի ներքին դրութեան մասին կարելի է բաժանել երեք խմբի, որոնք ընդունում են, թէ երկրի միջուկը ունի կամ կարծր, կամ հեղուկ և կամ գազանման դրութիւն:

Երկրի միջուկի կարծր լինելու տեսութիւնը ներկայումս ունի բաւական շատ պաշտպաններ, մանաւանդ անգլիայի գիտնականների մէջ: Երկրի հեղուկ կամ գազանման միջուկը, ասում են նրանք, պէտք է, որ ազդեցութիւն ունենային ծովային մակընթացութեան ու տեղատուութեան վրայ, նուազեցնելով նրանց ոյժը: Անգլիայի բնագէտ Դարվինը հաշուեց, որ մինչև անգամ եթէ երկրի կեղևը 100 կիլոմետր հաստութեամբ պողպատի կարծրութիւն ունենար, — հեղուկ կամ գազանման միջուկի մակընթացութիւններն ու տեղատուութիւնները պէտք է որ համարեա բոլորովին ոչնչացնէին երկրի մակերևոյթի վերայ տեղի ունեցող մակընթացութիւններն ու տեղատու-

թիւնները. իսկ որովհետև այդ բանը տեղի չէ ունենում, ուստի երկրի համարեա թէ ամբողջ միջուկը պէտք է կարծր լինի: Բայց Դարվինի հաշիւները աս կէտերում քննադատութեան չդիմացան, ուստի և նրանց վերայ հիմնուել չի կարելի:

Այդ դպրոցի միւս ապացոյցն ևս, որ իբր թէ երկրի հրահեղուկ զանգուածի սառուցման միջոցին պողած կարծր մասերը որպէս ծանր իրեր, պէտք է իջնէին երկրի կենտրոնը — սխալ դուրս եկաւ: Իրադրութիւնները ցոյց տուին, որ լաւայի կարծրացած կտորները լողում են հեղուկ լաւայի երեսին. միևնոյնը ներկայումս հաստատուած է փորձով մետաղների ու լեռնային ջերտերի ամբողջ շարքերի նկատմամբ, որոնք լողում են նրանց հալուած զանգուածի մէջ: Հետևաբար՝ երկրի հրահեղուկ զանգուածի սառեցման դէպքում կարող էր և պէտք է, որ կազմուէր կարծր կեղև, որը սառչելու միջոցին աստիճանաբար հաստանում էր:

Վերջապէս բոլորովին քննադատութեան չի դիմանում այս դպրոցի երրորդ ապացոյցն ևս, որ բարձր ճնշումը բարձրացնում է լեռնային շերտերի հալուելու ջերմութեան աստիճանը. ուստի և երկրի միջուկում տեղի ունեցող սաստիկ ճնշման ժամանակ, մարմինները կարող են կարծր մնալ չնայած խիստ ջերմութեան բարձր աստիճանին: Այս դրութիւնը գործադրելի է միայն մի քանի լեռնային հալուած շերտերի և հեղուկների վերաբերմամբ, այն էլ ոչ բարձր ջերմութեան աստիճանի վրայ: Վերջին տարիների փորձերը, ինչպէս օրինակ՝ Իւրևի համալսարանի պրոֆ. Տնամանինը, բերում են այն հակառակ եզրակացութեան, որ մարմինների մեծամասնութեան բարձր ճնշումը հալած իրերի ջերմութեան աստիճանը իջե-

ցընում է: Բացի դրանից բնագէտները աւելի որոշակի գալիս են այն եզրակացութեան, որ բոլոր մարմինները համար գոյութիւն ունի այսպէս կոչուած «կրիտիկական» շերմութիւն, որից բարձր բոլոր մարմինները ուրիշ գրութեան մէջ լինել չեն կարող, բայց եթէ միայն գազանման: Սակայն այստեղ պէտք է ասենք, որ այդ տեսակի բոլոր փորձերը կատարուել են չնչին շերմութեան և ճնշման միջոցին. չնչին համեմատած այն շերմութեան ու ճնշման հետ, որ գոյութիւն ունին երկրի խորքում: Շատ հնարաւոր է, որ երկրի ներսի արտաքոյ կարգի մեծ ճնշումների ու շերմութեան վերաբերմամբ ոչ միայն անգործադրելի են մարմինների մի գրութիւնից միւս վիճակին անցնելու օրէնքները, այլև ընդհանրապէս բանի պէտք չեն մարմինների երեք յատկութիւնների մասին մեր ունեցած հասկացողութիւնները, որոնցով բացատրում ենք մեծ ճնշումներն ու շերմութեան աստիճանները: Բայց մենք դեռ ևս այս չապացուցուած գրութիւնը հաշուի առնել չենք կարող, երկիւղ կրելով, որ փաստերի շրջանից կանցնենք երևակայութեան շրջանը:

Ի պաշտպանութիւն այն թեօրիայի, որն ընդունում է երկրի միջուկի կարծրութիւնը, վերջին ժամանակներս առաջ են քաշել մի նոր, սակայն նոյնպէս ոչ հաստատապէս ապացուցուած դիտողութիւն: Երկրաշարժների միջոցին ցնցումների արագութեան չափերը ցոյց է տուել, որ այդ ցնցումները անցնում են ոչ միայն երկրի կեղևին, որ ալիքաձև պատում է երկրագնդի շրջա կողմը, այլև աւելի մեծ արագութեամբ երկրի լայնութեան ուղղութեամբ: Հաղորդման այսպիսի արագութիւնը հնարաւոր է կարծես թէ միմիայն երկրի միջուկի կարծր լինելու դէպքում, որով-

հետև հեղուկների ու գազերի մէջ հարուածները հաղորդում են շափազանց թոյլ ու դանդաղ: Բայց այս դէպքում հաշուի չեն առնում այն հանգամանքը, որ հարուածների հաղորդման արագութիւնը կախումն ունի գլխաւորապէս միջավայրի կարծրութիւնից, այլ ոչ թէ նրա գրութիւնից. ուստի և երկաթի կարծրութեամբ խտացած գազերը կարող են նոյնպէս լաւ հարուածներ տալ, ինչպէս և կարծր երկաթը: Այսպիսով երկրի միջուկի կարծրութիւնը պաշտպանող բոլոր ապացոյցներից ոչ մէկն էլ չի հերքում:

Լաւ չի ապացուցուած նոյնպէս և երկրային միջուկի հեղուկ գրութեան տեսութիւնը, թէև նրա հետևողների թիւը, մանաւանդ Ֆրանսիայի գիտնականների մէջ (Դիլոնէ, Լապլարան), այժմ էլ շատ մեծ է: Այդ տեսութիւնը հիմնուած է նախ և առաջ հրաբխային արտավիժած հեղուկ լաւայի վերայ: Բայց հեղուկ լաւայի ժայթքումը հնարաւոր է առանց հեղուկ միջուկի էլ, որովհետև հրաբուլցի բերնի ճնշման պակասելու պատճառով կարծր լեռնային շերտերն էլ կարող են հեղուկ գրութեան փոխուել: Բացի այդ, այժմ աւելի պարզում է, որ հրաբուլցիները իրանց սկիզբը առնում են ոչ թէ երկրի միջուկի միջից, այլ շատ աւելի վերի շերտերից: Երկրային հեղուկ միջուկի պաշտպանները յենում են նոյնպէս լեռների կազմութեան գործողութիւնների վերայ, որ նրանց կարծիքով հնարաւոր է միայն այն դէպքում, երբ երկրի կեղևը հեղուկ գրութեան մէջ լինէր: Նրանք կարծում են, որ յօգուտ այդ բանի վկայում են նոյնպէս երկրի տափակացած լինելը և օրուայ երևոյթների տատանումը, այսինքն երկրի առանցքի աննշան տատանումները, երկրի շարժման միջոցին: Բայց այս բոլոր երևոյթները կատարելապէս հնարաւոր են թէ

երկրի միջուկի կարծր և թէ մանաւանդ գազանման լինելու դէպքում, որովհետեւ խիստ ճնշման միջոցին լեռնային սամենակարծր շերտերը դառնում են թանձր, այսինքն յայտնի կէտում յիշեցնում են հեղուկ մարմիններ: Երկրային միջուկի հեղուկ լինելու ենթադրութիւնը չեն կարող պաշտպանել և յաճախ նրանց օգտին առաջ բերուած տիեզերքի ծագման ենթադրութիւնները (Կանախ, Լասլլասի, Ֆայի և սերիշների), որովհետեւ նրանք կախումն չունին երկրի միջուկի դրութիւնից և քիչ են պարզում այն հարցը, թէ, ինչպէս առաջ եկաւ երկրի սառչումը և թէ ինչ հաստութեամբ է սառել: Այս թեորիայի քննութեան դէմ դուրս է գալիս բնագիտութիւնը, խիստ լուրջ կերպով, պնդելով որ եթէ երկրի ներսում այդ աստիճան տաք լինէր՝ բոլոր մարմինները գազանման դրութեան մէջ պէտք է լինէին:

Այսպիսով մնում է միմիայն երրորդ ենթադրութիւնը, որ ընդունւում է, թէ երկրի ներքին մասը գտնւում է գազանման դրութեան մէջ: Այս հայեացքը, որպէս ենթադրութիւն, առաջին անգամ արտայայտել էր Ֆրանկլինը. իսկ յետոյ Գերմանիայում մանրամասն մշակեցին Ռիտտերը, Յեպրիտցը, Պենկնը ու Գիւնթերը, և որը ներկայումս գոնէ երկրաբանների շրջանում մեծ ընդունելութիւն է գտած:

Այն տեսութիւնը, որ երկիրը պարունակում է իր մէջ գազանման գանգուած՝ ներկայումս հեռեկալ կերպ է ներկայացրած: Երկրի ներսում, արտաքին կարծր կեղևի տակ, որի հաստութեան մասին ոչ մի որոշ բան չի կարելի ասել. (ըստ Արենիոսի նա հաւասար է 40 կիլոմետրի, ըստ Պֆաֆֆի 80 կիլոմ. ըստ Պիլիարի՝ 120 կիլոմ. ըստ Գոպկենսի՝ 1000 կիլոմ.), տարածւում է մի շերտ, որ գտնւում է թան-

ձրացեալ դրութեան մէջ, որ յիշեցնում է կօշկակարի մոմախառն կալրածիւթը: Այդպիսի շերտի գոյութիւնը չափազանց հաւանական դարձրեց այն տեսութիւնը, որ լեռնային շերտերը սարեր կազմելու միջոցին կռանում են առանց կոտորուելու: Թանձրացեալ շերտի տակ գտնւում է լաւանման կամ ձիւթանման հեղուկ շերտը, իսկ նրա տակը միմիայն իսկական հեղուկ շերտը: Այդ շերտերին հետևում են սովորական գազերի շերտերը, իսկ նրա տակ գազեր, խիստ տաքացած դրութեան մէջ: Վերջապէս կենտրոնում գտնւում են այսպէս կոչուած միահիւլէ կազմող գազեր, որոնք արդէն կորցրած են իրենց բնորոշ քիմիական յատկութիւնները, որովհետեւ նրա մոլէկիւլները արդէն բաժանուեցան հիւլէների՝ բարձր շերմութեան ազդեցութեան տակ: Այս բոլոր շերտերից և դրութիւններից անցնելը կատարւում է աննկատելի ու աստիճանաբար. այս պատճառով երկրի շարժման միջոցին այս բոլոր շերտերի մէջ ոչ մի տեղափոխութիւն չի կարող առաջ գալ, որոնք պէտք է որ անդրադառնային մակընթացութիւնների, տեղատուութիւնների և երկրի առանցքի տեղափոխութեան վրայ: Յիշեալ շերտերի համեմատական զօրեղութեան վերաբերմամբ առայժմ կարող են գոյութիւն ունենալ միայն չափազանց հաւանական ենթադրութիւններ: Շւէտացի երկրաբանագէտ Արրենիոսը ենթադրում է, որ գազանման գանգուած պարունակող շերտը բռնւում է երկրի տրամագծի 95%, հրահեղուկը՝—4%, իսկ երկրի կարծր կեղևը միայն՝—1%. սակայն միւս գիտնականները վերջինին վերագրում են շատ աւելի պրոցենտ:

Ռիտտեր-Յեպրիտց-Գիւնտերի թեորիան թէև դեռ բոլորովին ապացուցուած չէ, սակայն հիանալի կեր-

պով համաձայնում է աստղաբաշխութեան ու երկրաբանութեան հիմնական սկզբունքների հետ. ուստի, իմ կարծիքով, այս տեսութիւնը գերադասելի է մեր յիշած բոլոր թեօրիանների մէջ:

Բացի յիշեալ երեք գլխաւոր տեսութիւններից՝ շնորհիւ հանգուցեալ Ի. Վ. Մուշկէտովի ուսուցանութեան մէջ խիստ տարածուած է այն թեօրիան, որ բռնում է կարծր ու հեղուկ դրութիւն քարոզող ուսմունքների միջին տեղը: Այս տեսութեան համաձայն՝ արտաքին կարծր կեղևի տակ գտնուում է թանձր հեղուկ պարունակող մի շերտ, որից յետոյ սկսւում է երկրի կարծր միջուկը: Այս ուսուցումը առաջ տարաւ Պուլլէ Սկրուպէն և պաշտպանեց Փայը, բայց դրա եռանդուն ու տաղանդաւոր պաշտպանն էր գերմանացի Լազո պրոֆեսորը, որի համար և այդ տեսութիւնը կոչուեցաւ նրա անունով: Լազոն իւր տեսութիւնը միւսներից զանազանելու համար՝ բացատրութեան ելակէտ էր ընդունում երկրի սառման պրոցեսը: Նրա կարծիքով գազանմանից հեղուկ, իսկ յետոյ էլ կարծր դրութեան փոխուելը երկրի միգամածի աստիճանաբար սառելու ժամանակ պէտք է սկսուէր կենտրոնից, և ոչ թէ վերելից, որովհետև կենտրոնում երկրի սեղմելու ազդեցութեան տակ ճնշումը աճում է արագօրէն: Երկրի արտաքին կեղևի խրտանալը սկսուել է աւելի ուշ: Այսպիսով, կարծրացման պրոցեսը սկսուեց երկու կողմից — կենտրոնից ու դրսի կողմից, և պէտք է երկիրը կամ կատարեալ կարծրութեան հասցնէր, որին, Լազոի կարծիքով դեռ հասած չէ, կամ պէտք է առաջ բերէր միջանկեալ հեղուկ շերտ: Լազոն այդ շերտը ընդունում էր, որ նա բաղկացած է հալած ձիթաքարերի խաւերից: Լազոի տեսութիւնը չափազանց տրամաբանօրէն է

մտածուած և մանրամասն մշակուած, բայց դժբախտաբար նրա դէմ էլ նոյն ուժով դուրս են գալիս վերը հաշուած բոլոր առարկութիւնները երկրի կարծրը և հեղուկ դրութեան դէմ, ուստի և այդ թեօրեան ևս ապացուցուած չի կարելի համարել:

Յօդուտ երկրի միջուկի կարծր և մինչև անգամ բիւրեղային դրութեան, որին հետևում է թանձրացեալ շերտի, — վերջին ժամանակներս իւր կարծիքը յայտնեց պրօֆ. Բուգսկին իւր լուրջ աշխատասիրութեան մէջ, որի համար պարգևատրուեցաւ Կրակովի Գիտութեան Ճեմարանի Կոպերնիկոսի մրցանակով: Բայց նրա ամբողջ տեսութիւնը հիմնուած է այն ենթադրութեան վերայ, որ երկրի կենտրոնում ջերմութեան աստիճանը մի քանի հազար աստիճանից բարձր չէ, ուստի և այդ թեօրիան իւր արժէքը կորցնում է:

Այսպիսով այն հարցին՝ թէ ի՞նչ դրութեան մէջ է երկրի միջուկը, — ներկայումս էլ գիտութիւնը անկարող է վերջնական պատասխան տալ. բայց նա աւելի ու աւելի թեքւում է երկրի միջուկի գազանման լինելու կողմը: Բայց երկրի միջի գազերը շատ քիչ են նմանում հասարակ գազերին. նրանք այն աստիճան սեղմուած են, որ աւելի ծանր են երկաթից. նրանց ջերմութեան աստիճանը այնքան բարձր է, որ նրանք հիւլէների բաժանուելով՝ կորցրին իրենց բոլոր բիմիական յատկութիւնները, իսկ գազերի յատկութիւններից պահեցին միմիայն այն ընդունակութիւնը, որ ճնշման ցածրանալու դէպքում նրանք կարող են չափազանց լայնանալ, այսինքն՝ սարսափելի պայթում առաջ բերել: Այսպիսի պայթումը մի ակնթարթում կը կործանէր ամբողջ երկիրը իւր ամբողջ կուլտուրայով: Բարեբախտաբար այդպիսի պայթում չի կարող առա-

Ղանալ, որովհետև երկրի կեղևը խիստ ամուր է, իսկ ջերմութեան աճումը և ճնշումը չափազանց դանդաղ և աստիճանաբար է գնում, այնպէս որ երկրի՝ ամենուրեք փոքր տարածութեան վրայ ճնշման մեծութիւնը չնչին է համեմատած գիւմարութեան հետ: Այս պատճառով՝ աշխարհի կատարածը, ինչպէս և իւր ժամանակին նախազուշակուած մի շարք ուրիշ բաներ, — երևում են սակաւ հաւատալի:

Ինչպէս են հաշուում երկրի հնութիւնը. (Գր. Կվաշիի).

1.

Երկրաբանական ժամանակագրութիւն: — Հատեւասական եւ բացարձակ հեռութիւն: — Ո՞րք արեջի հիկն է. — Ուրաղ, թէ Կովկասը: Հատեւասական հեռութեան որոշումը, ըստ հաւերի տեսակների նշած խորութեան: — Հեռութեան որոշումը, ըստ քարայրի մարմինների: Երկրի պատմութեան տարեքուտը ու ժամանակաշրջանները:

Ինչպէս ազգերի պատմութիւնը, այնպէս էլ երկրի պատմութիւնը ունի իւր ժամանակագրութիւնը: Երբ երկրաբանը խօսում է երկրի կեանքում պատահած մի որևէ անցքի հնութեան մասին, այն ժամանակ նրան ոչ այնքան կատարուած անցքի մոմենտն է հետաքրքրում, ինչքան այն հարցը՝ որ վաղ թէ ուշ այդօրինակ անցքը կատարուել է: Մենք դժուարութեամբ ենք մտնում ճշմարտութեանը և մինչև անգամ չգիտենք, օրինակի համար՝ թէ քարածուխի խաւերի գոյութիւնը քանի տարի է, բայց դրա փո-

խարէն մենք հաւաստեօք գիտենք, որ քարածուխի խաւերը հնագոյն են քան պերմսեան խաւերը: Եթէ դուք երկրաբանին հարցնէք, թէ Կովկասեան կամ Ուրալեան լեռնաշղթաների գոյութիւնը քանի տարի է, այն ժամանակ նա ձեզ կը պատասխանէ՝ չգիտեմ: Բայց միևնոյն երկրաբանը առանց տատանուելու պիտի ասէ, որ Կովկասեան լեռնաշղթան իր գոյութեամբ աւելի նոր է, քան Ուրալիանը:

Մի խօսքով երկրաբանութեան մէջ առաջնակարգ տեղ է բռնում երկրաբանական անցքերի համեմատական հնութեան որոշումը, այն, ինչ որ անուանում են համեմատական ժամանակագրութիւն:

Որ Կովկասեան լեռնաշղթան աւելի փոքր է տարիքով քան Ուրալիանը, դժուար չէ դատել արդէն այս հրաշագեղ լեռնաշղթաների արտաքին ձևից: Կովկասեան լեռնաշղթան տարբերում է իւր զանազանակերպ և պարզ եզրագծերի գեղեցկութեամբ. սրածայր, կտրուած զագաթները և խոր, զալարուն ձեղքերը վկայում են այն մասին, որ նա երիտասարդ է, որովհետև նա դեռ չէ ենթարկուել մակերևոյթային ջրերի ողողող ու քանդող ներգործութեան: Ուրալիան լեռնաշղթան այդ դէպքում կատարեալ հակապատկեր է ներկայացնում. նրա եզրագծերը աւելի կամ պակաս հարթուած են և ցոյց են տալիս սաստիկ կործանման ու քայքայման հետքեր:

Դա՛ մասնաւոր դէպք է. ընդհանրապէս երկրաբանութեան մէջ համեմատական հնութեան որոշումը այնքան էլ պարզ բան չէ. իսկ երբեմն նա կապուած է անյաղթելի դժուարութիւնների հետ:

Այս հարցի վերաբերմամբ երկրաբանները շատ աշխատեցին: Առաջարկուած էր մի քանի միջոցներ, որոնցից և ոչ մէկը ընդհանուր ընդունելութիւն չի

գտնում այսինքն՝ անգործադրելի է խաւերի բոլոր տեսակների նկատմամբ, որոնք երկրի կեղէն են կազմում, իսկ մի քանիսն էլ բոլորովին հիմք չունին:

Օրինակի համար՝ փորձեցին որոշել շերտերի համեմատական հնութիւնը ըստ նրանց շարքով դասաւորութեանը: Եթէ մեր առաջ ունինք անհուն ժամանակաշրջանում կազմուած խաւերի մի շարք, ապա առաջին իսկ հայեացքից պարզ է, որ այս կամ այն շերտը այնքան հին կը լինի, որքան նա խորը դասաւորուած լինի: Բայց չխօսելով այն մասին, որ այդ միջոցը անգործադրելի է ժայթքող խաւերի տեսակների նկատմամբ, որոնք կազմուած են ոչ աստիճանաբար դասաւորուելով, — նա, այդ միջոցը, ըստ իւր էութեան ուղիղ չէ: Բանն այն է, որ միայն սակաւ դէպքում շերտերը պահպանեցին իրանց սկզբնական դասաւորութիւնը. շատ դէպքերում այդ դասաւորութիւնը բոլորովին խախտուած է. մեր մոլորակի ծոցում կատարուող զանազանակերպ պրոցեսների շնորհիւ արտավիժած և այս ու այն կողմ ձգուած զանգուածները շատ տեղերում բոլորովին խախտեցին շերտերի այն դասաւորութեան կարգը, որով նրանք դասաւորել էին. յաճախ աւելի նոր շերտերի վերայ նստում են աւելի հնագոյն շերտեր: Շերտերի այդպիսի տեղափոխումը այդ միջոցը բոլորովին անպէտք է դարձնում: Այդ միևնոյնն է, ինչպէս դիւանում, որ յատակից մինչև առաստաղը լեցուած է վկայաթղթերով, թէ մարդ փորձի դատել այդ թղթերի համեմատական հնութիւնը, ըստ իրենց դասաւորման:

Աւելի յաջող և աւելի բեղմնաւորիչ որոշման միջոցներ են դասաւորումների համեմատական հնութիւնը ըստ բուսական և կենդանական աշխարհի քարացած մնացորդների:

Երկրի բոլոր գործարանական մարմինների կեանքը ներկայացնում է որոշ օրգանիզմների փոփոխուելը, որոնց տեղը բռնում են աւելի կենսունակները:

Կենսունակութիւն չունեցող տեսակների աստիճանաբար ոչնչացումը և գործարանական մարմինների կատարելագործումը մինչև մարդու յայտնուելը — այդ փաստ է անհերքելիօրէն հաստատուած հնաբանական գիտութեան կողմից: Մեռած օրգանիզմները մնում են նոր կազմուող շերտերի մէջ և ժամանակի ընթացքում քարանում են: Ահա ըստ այդ քարացած մնացորդների էլ դատում են շերտերի հնութեան մասին: Քարացած մարմինները նոյն դերն են խաղում, սրպիսին ունին զբաւոր վկայաթղթերը ազգերի պատմութեան մէջ: Մինչև անգամ աւելի էլ: Քարացած մարմինները անպայման արժանի են վստահութեան. երկրի պատմաբանը, որ փորձում է վերականգնել նրա անցեալ պատկերը քարացման հիման վերայ, դեռ պատահած չէ, որ կեղծիքներից վախենայ, մինչդեռ զբաւոր վկայաթղթերը երբեմն և սարքովի են դուրս գալիս:

Ափսոս, որ ոչ բոլոր խաւերի տեսակները թողել են իրանց կնիքը, և ոչ բոլոր շերտերը պարունակում են իրանց մէջ քարացած մարմիններ: Բոլոր այդ միջոցները անփոխարինելի ծառայութիւն մատուցին երկրաբանական ժամանակագրութեանը: Համեմատական ժամանակագրութիւնը մեծամեծ նուաճումներ է անում հնաբանական գիտութեան զարգացման շնորհիւ: Հնաբանական գիւտերի հիման վերայ բոլոր երկրաբանի գործարանական մարմինները բաժանում են երեք խոշոր ժամանակաշրջանների. պալեօոյական, մեզոօոյական և նեօօոյական կամ կենօոյական, որոնք համապատասխանում են ազգերի պատմութեան հին,

միջին և նոր դարերին: Այս դարաշրջաններից իւրաքանչիւրը, որ հարիւր միլիօն տարիներ է տևում, բնորոշուում է լիովին որոշակի գործարանական մարմինների տեսակները, որ միակ նրան յատուկ է ամբողջութեամբ: Իսկ իւրաքանչիւր դարագլուխը բաժանուում է իր հերթին շրջանների, շրջաններն էլ՝ բաժանմունքների և այլն, ըստ այսմ, այս երկրաբանական դարեգլուխներից իւրաքանչիւրը բնորոշուում է մի որևէ գործարանական տեսակի առանձին գերիշխանութեամբ, որը և կոչուում է այդ դարագլխի «քարացման ղեկավարողը»:

II.

Բացարձակ հնոքիւն:--Տոմսոնի եւ Հերկոյցի գիսակասն աշխատակները:--Նիսպարա ցրվեժի սարիխը:--Մեսսիսիսի դեյսայի սարիխը:--Յցաշենի սարիխը:--Լասոժեասն ափերում ապրող նախապատկասն քնակիչների հնոքիւնը:

Մինչև այժմ, մենք խօսեցինք այլ և այլ դարագլուխների համեմատական հնութիւնների մասին երկրի պատմութեան մէջ: Չափազանց մեծ դժուարութիւնների ենք հանդիպում, երբ ուզում ենք վճռել երկրաբանական բացարձակ ժամանակագրութեան հարցերը:

Ի՞նչ հասակ ունին այս կամ այն երկրաբանական շերտերի դասաւորումները: Քանի՞ տարի է անցել այն օրից, երբ առաջին անգամ յայտնուեց գործարանական մարմինների կեանքը երկրի վերայ: Քանի՞ տարի է անցել այն մոմենտից, երբ յայտնուեց առաջին մարդը երկրի վերայ: Վերջապէս որքան հին է մեր մոլորակը:

Այս հարցերը վաղուց ի վեր դեղեցնում են գիտնականներին, և մինչև այժմ դեռ, աւաղ, անյայտութեան խաւարով է ծածկուած:

Այս հարցերը լուծելու համար բազմաթիւ մեթոդներ գործ դրուեցան, բայց այդ բոլորի մէջ առաւել սրամտութիւն էր երևում, քանի՞նչ ճշտութիւն:

Նշանաւոր անգլիացի ֆիզիկոս Վիլիամ Տոմսոնը մօտիկ անցեալում որոշեց երկրի տարիքը ֆիզիկոմատիմատիկական ճանապարհով: Մենք գիտենք, որ երկրի ջերմութեան աստիճանը խորութեան համեմատ աճում է մօտաւորապէս 1⁰ (Յելսիուսի) իւրաքանչիւր 35 մետր խորութեան վրայ: Հիմնուելով այս բանի վերայ և ուշադրութեան առնելով երկիրը կազմող խաւերի ջերմութիւն հազօրդելու յատկութիւնը, նոյնպէս և այն ենթադրեալ ջերմութիւնը, որ ունեցել է մեր երկիրը, երբ նա հայտուած դրութեան մէջ է եղել,—Տոմսոնը հաշուեց, թէ, որպէսզի երկիրը հասնէր ժամանակակից սառած աստիճանին, նրան պէտք կը լինէր «ընդամենը» մօտաւորապէս 100 միլիօն տարի: Այսպիսի արդիւնք սուին նոյնպէս և գերմանացի հոշակաւոր ֆիզիկոս Հելմհոլցի հաշիւները: Բայց երկրաբանները որոշ գիտական հիմքերով ցոյց էին տալիս, որ մեր մոլորակը չափազանց հին է:

Մի քանի բնագէտներ փորձեցին որոշել երկրի տարիքը փորձնական ճանապարհով: Բիշոֆը հալեցրեց սևակուճի (базальт) այլ և այլ մեծութեամբ գնդակներ և նրանց սառուցման արագութեան համաձայն հաշուեց, որ մինչև երկիրը ընդունէր երկնային տարածութեան ջերմութեան աստիճանը, պէտք է որ 350 միլիօն տարի անցնէր: Իսկ միւս երկրաբան

կինզը նոյն եղանակով գտաւ, որ երկրի գոյութիւնը 24 միլիօն տարի է... Արդէն այս անհամաձայնութիւնը ցոյց է ապրիս ինչպէս անստոյգ են նմանօրինակ մեթոդները:

Այժմ ցոյց տանք, թէ ինչպէս էր որոշուած երկրաբանական առանձին կազմակերպութիւնների հասակը:

Ինչքան հին է Նիագարայի ջրվեժի գոյութիւնը: Նիագարայի ջրվեժը, ինչպէս յայտնի է, գտնուում է էրի և Օնտարիօ լճերի մէջտեղում: Մի ժամանակ նա 12 կիլոմետր, կամ 1.200.000 սանտիմետր, մօտ էր գտնուում Օնտարիօ լճին: Ընդունելով, որ ջրվեժը ջրի ողողող ներգործութեան տակ մի տարուայ ընթացքում 33 սանտիմետր հեռանում է՝ Չարլզ Լեաէյը որոշեց ջրվեժի հասակը 36.000 տարի: Միւս երկրաբանների հաշիւները, որ հիմնուած են նոյն մեթոդների վրայ, Նիագարա ջրվեժի հասակը որոշում են այնպիսի թուերով, որ տատանուում են 10.000 և 50.000 տարիների մէջ: Տարածայնութիւնը, ինչպէս անսնում էք, շատ մեծ է:

Քանի՞ տարի է Միսսիսիպիի գելատայի գոյութիւնը: Յայտնի է, որ ջրամբարների յատակում աստիճանաբար նստում են ջրի բերած տականքներ: Առանձնապէս շատ նիւթեր գետաբերաններում են նստում. այստեղ գետը չափազանց լայն է. ջրի արագութիւնը այդ պատճառով մեղմանում է, հէնց այդ նպաստում է առաւել առատօրէն տականքների շերտաւորման:

Իմանալով բոլոր շերտերի և նստած խաւերի հաստութիւնը՝ կասենք, որ մի տարուայ ընթացքում կարելի է որոշել այս կամ այն գետի տարիքը հասարակ բաժանումով: Այս ճանապարհով Միսսիպիի գելատայի տարիքը որոշուած է 65.000 տարուայ մին-

չև 70.000 տարի: Ժրնսեան լճի ավերում, Վիլնեսայի մօտ գտնուող Տենպերա գետակի հին գելատայի կլիտուածներում գտնուել են քարեդարի մնացորդներ: Այս գելատայի վրայով երկաթուղի անցկացնելու միջոցին հորեր փորեցին գանազան խորութիւններով, որը երևան հանեց երեք բուսական շերտեր. առաջին շերտում, որ գտնուում էր 1,2 մետր խորութեան վերայ, գտան հոովմէական գրամ և կղմինտը. երկրորդ շերտն ունէր 3 մետր խորութիւն, — նրա մէջ գտան կաւեղէն ամանեղէնների կտորտուած մասեր և բրօնզից շինուած իրեր. երրորդ շերտում, որ ունէր 5 մետր խորութիւն, գտնուել էին կոշտ կաւէ ամանեղէնների կտորտանքներ, ջարդուած սկիւնքեր, մարդկային գանդ և քարէ գործիքներ:

Ենթադրելով, որ 1,2 մետր խորութեամբ գրանուած հոովմէական գրամը գրուած է եղել գտնուած տեղում 16—18 դար առաջ, — քարէ իրերի հնութիւնը որոշեցին 5000-ից մինչև 7000 տարի: Միաժամանակ հիմք ընդունեցին այն ենթադրութիւնը, որ շերտաւորումը կատարուել է համաչափ կերպով, և լուծեցին խնդիրը երկից կանոնով. — 1,2 մետր հաստութեամբ խաւ կազմելու համար պէտք է 1600-ից մինչև 1800 տարի. իսկ քանի՞ տարի պէտք կը լինէր 5,6 մետր հաստութիւն ունեցող խաւի կազմութեան համար:

Հարկաւ, նմանօրինակ հաշիւները արժանի չեն վստահութեան, որովհետև հիմնական ենթադրութիւնը, որ տականքների շերտաւորումը կատարուում է համաչափ կերպով — ճիշտ չէ. բայց այնուամենայնիւ այդ հաշիւները որոշ չափով մօտենում են ճշմարտութեան:

Զւիցերիայի քարեդարի ցցերի վրայ կառուցած

շէնքերի շարքում Հիլերոնը գտաւ Բիենեան և Նև-
շաթեղեան լճերի միջում գտնուած ցամաքի վերայ
մի շէնք: Այս շէնքի և Բիենեան լճակի ափի միջև
գտնուում է Սուրբ Յովհաննէսի հնաւուրց վանքը, որի
հիմնուելու ժամանակը արդէն յայտնի է: Նոյնպէս
յայտնի է, որ այդ վանքը կառուցուած էր Բիենեան
լճի ափին, իսկ այժմ գտնուում է եզերքից բաւական
հեռու տարածութեան վերայ: Ուշադրութեան առ-
նելով լճի լայն շափով չորանալը յայտնի պատմա-
կան ժամանակուում, հաշուեցին, որ քարեգարից մեզ
բաժանում է մի ժամանակաշրջան, որ հասնում է
առնուագն 6750 տարու: Ըստ այսմ՝ Հիլերոնը հիմք
է ընդունում այդ ենթադրութիւնը, որ լճերի չորա-
նալը՝ առաջ է գալիս համաշափօրէն, — որը սակայն չի
համապատասխանում իրականութեան:

Դժուար չէ նոյնպէս հաշուել նախապատմական
մարդու հինաւուրց լինելը, որ ապրում էր Լատոժ-
եան լճի եզերքներում: Ջրանցքներ շինելու համար
խրամատներ փորելիս համեմատաբար ոչ այնքան խո-
րութեան վերայ գտան սաթի կտոր և երկաթէ կա-
ցին, որ հնագէտների կարծիքով պատկանում է X
կամ XI դարին: Հեռացնելով բոլոր կիտուած աւազ-
ները երևան հանեցին մի մշակուած շերտ, որ ամ-
փոփում էր իւր մէջ նախապատմական մարդու
զանազան մնացորդներ. եթէ ընդունենք, որ շեր-
տաւորումները համաշափ են կազմուել, այն ժա-
մանակ Լատոժեան լճի եզերքում ապրող նախա-
պատմական մարդու հնութիւնը կարելի է հա-
շուել առնուագն 8-9 հազար տարի: Հարկաւ՝
այստեղ ևս ճշտութիւնը վերականգնելու համար դեռ
շատ ուսումնասիրութիւններ են հարկաւոր:

111.

Ռադիի դերը երկրաբանական ժամանակագրութեան
բարեփոխման մէջ: — Տոստոնի սխալը: — Հակերի հնո-
բիւնը: — Երկրաբանական ժամանակագրութեան ա-
պագան:

Ռադիի զիւտը և ռադիակտիկական երևոյթները
ուսումնասիրութիւնը, որ յեղաշրջում առաջ բերեց
մեր Ֆիզիքական և քիմիական տեսութիւնների մէջ,
նոր դարաշրջան է բաց անում երկրաբանական ժա-
մանակագրութեան մէջ:

Այն խաւերի մէջ, որոնք կազմում են երկրի կե-
ղևը, ինչպէս ցոյց են տալիս հետազօտութիւնները
քիչ չեն այնպիսիները, որոնք որոշում են ռա-
դիակտիկանութեամբ:

Յայտնի է, որ ռադիակտիկական նիւթերը իրենց
տարրալուծման պրոցեսի ժամանակ ջերմութիւն են
արձակում: Մեր մոլորակի գոյութեան երկար դա-
րաշրջանի ընթացքում, նրա մէջ պարունակուող ռա-
դիակտիկական նիւթերի տարրալուծման ժամանակ
պէտք է չափազանց մեծ քանակութեամբ ջերմու-
թիւն կազմուէր: Այնինչ Վիլիամ Տոմսոնի հաշիւնե-
րի մէջ ուշադրութեան առնուած չէր այդ: Բնական
է, որ նա իրական նշանակութիւնից աւելի պակաս
արդիւնք պէտք է ստանար: Այս կերպով ռադիակտի-
կական երևոյթները բաց են անում մեզ այն դիտնա-
կանների սխալների աղբիւրը, որոնք, ինչպէս օրինա-
կի համար՝ Վիլիամ Տոմսոնը, Հելմհոլցը, Բելոֆը և
ուրիշները, երկրի տարիքը որոշում էին ըստ նրա
ջերմութեան նուազման և միևնոյն ժամանակ յոյս
ունին, որ այդ միջոցները կը կատարելագործուին, և
այդպիսով կստանան աւելի ճշգրիտ հետևանքներ:

Սրանով չի վերջանում ռազիակտիկական երեւոյթների նշանակութիւնը երկրաբանական ժամանակաշրջանի համար:

Ռազիակտիկական երեւոյթները չեն տալիս ինքնուրոյն միջոց՝ որոշելու հանքերի իսկական տարիքը, որոնք պարունակում են իրանց մէջ ռազիակտիկական կոչուած նիւթերը և հեռաբար խաւեր, որոնք պարունակում են իրանց մէջ այդ հանքերը:

Բացատրենք այդ բանը օրինակով:

Կայ ֆերզիւզոնիտ կոչուած մի տեսակ հանք: Այդ հանքը, որ պարունակում է իւր մէջ 7% ուրան, Րամգայի փորձին նայելով, տալիս 1,81 խորանարդ սանտիմետր զելիյ իւր ծանրութեան ամեն մի գրամմին: Հեռաբար ուրանի 1 գրամմին դալիս է $\frac{100.181}{7}$ խոր. սանտիմետր զելիյ, կամ մօտաւորապէս — 26 խոր. սանտիմետր զելիյ: Միւս կողմից յայտնի է, որ մէկ գրամ բազիից և նրա բազիակտիկական արզիւնքներից տարուայ ընթացքում կազմւում է $\frac{5.2}{10^8}$ խոր. սանտիմետր զելիյ: Այժմ դիւրին է հաշուել ֆերզիւզոնիտի տարիքը. նա = 26: $\frac{5.2}{10^8}$, այսինքն մօտաւորապէս 500 միլիօն տարու:

500 Միլիօն տարի: Ենթադրում են, որ այդ թիւը աւելի շատ պակաս, քան բարձր է իւր իսկական նշանակութիւնից, որովհետեւ այդ դարաշրջանի չափով զելիյի մի մասը, հաւանական է, որ օդի մէջ ցան ու ցիր է եղած:

Պէտք է ի նկատի ունենալ, որ այդ միջոցը նոյնպէս առայժմ մեծ ճշտութիւն չի ցոյց տալիս. ամենից առաջ արմատական հիմքը ռազիակտիկական նիւթերի վերալուծման արագութիւնը դեռ ևս բա-

ւականաչափ ճշտութեամբ որոշուած չէ: Այնինչ ամենաչնչին սխալը այս մեծութեան մէջ, երկրաբանական հաշիւներում սխալներ է առաջ բերում, սըխալներ, որ հաշուում են տասնեակ կամ հարիւր միլիօնաւոր տարիներ:

Բայց ինչ էլ որ լինի, չի կարելի չհամաձայնել Րեզգեֆորդի հետեւեալ խօսքերին. «Երբ այն տուեալները, որոնց վերայ հիմնուած են այդ հաշիւները, աւելի լաւ որոշուին, այն ժամանակ զելիյի ներկայութիւնը ռազիակտիկական հանքերի մէջ պէտք է ծառայի իբր անգին միջոց այդ հանքերի տարիքը որոշելու համար և թոյլ կը տայ մեզ անուղղակի կերպով որոշել շերտերի հնութիւնը, որոնց մէջ այդ հանքերը գտնուած են: Շատ հաւանական է, որ այդ միջոցը պէտք է լինի ամենավստահելի ու հաստատ միջոցներից մէկը, որոշելու երկրաբանական կազմութիւնների տարիքը:

Մենք չպէտք է յոյսերս կտրենք, որ երկրաբանութեանը երբ և իցէ կը յաջողուի մշակել աւելի կամ պակաս ճշգրիտ միջոց երկրաբանական իսկական ժամանակագրութեան մասին. բայց առայժմ ստիպուած ենք բաւականանալ գոյութիւն ունեցող վերին աստիճան անկատար միջոցներով:

— Ինչի՞ են պէտք այդ միջոցները, — կը հարցնէ անշուշտ ընթերցողը, — երբ նրանք այնպիսի սխալներ են գործում, որ հասնում են տասնեակ և մինչև անգամ հարիւր միլիօնաւոր տարիների:

Բոլորովին ճիշտ է — կը պատասխանենք մենք, — սխալը մեծ է, բայց դրա փոխարէն չէ՞ որ նոյնիսկ դարաշրջաններին էլ, որոնց մասին այստեղ խօսուում է, նոյնպէս աներևակայելի կերպով մեծ են: Բանը սխալի բացարձակ մեծութիւնը չէ, այլ նրա այն

յարաբերութիւնը, որ նա ունի գէպի չափուող մեծութիւնը. լիովին բաւական է և այն, որ մենք կարող ենք վստահութեամբ ասել, թէ այսինչ երկրաբանական կազմութիւնը զոյութիւն ունի մի քանի միլլիօն և ոչ թէ մի քանի հազարաւոր տարիներ: Եւ մենք պէտք է լցուենք հպարտութեան զգացմունքով, ոգևորուած այն գիտակցութեամբ, որ մարդկային միտքը գտնէ կարողացաւ ձեռք բերել մի ընդհանուր մտապաակեր այն ահագին դարաշրջանների մասին, որոնց ընթացքում մեր մոլորակի մակերևոյթի վրայ առաջ եկան այս կամ այն փոփոխութիւնները:

ՏԻԵՋԵՐՔԻ ԾԱԳՈՒՄԸ.

Լատալսի հիպոտեզը.

I.

Թէ ինչպէս են կազմուել երկնային զանազան մարմինները՝ աստղաբաշխները այդ ճիշտ չգիտեն և չեն էլ կարող իմանալ: Բայց և այնպէս արեգերթի մէջ գտնուող աշխարհների ծագման հարցը այնքան հրապուրիչ ու գրաւիչ է, որ աստղաբաշխները փորձեցին գէթ մօտաւոր չափով նկարել աստղային համակարգութիւնների սկզբնաւորութեան պատկերը: Բայց այդպիսի փորձը, հարկաւ, պէտք է որ գիտական սկզբունքերի վերայ հիմնուէր: Աւելի բաւական կը լինէր սկզբում խնդիրը չափաւորել և փորձել մեր արեգակնային համակարգութեան ծագումը բացատրելու: Արդէն Լատալսը ենթադրում էր, որ մեր արեգակնային համակարգութիւնը կազմուել է սկզբնական միգամածից (туманность), որը իրենից ներ-

կայացնում է քառային նիւթի և այնպիսի բազազրութիւնների կուտակումն, որոնց նմանը մենք տեսնում ենք երկնքում: Տեսնենք, կարո՞ղ է արդեօք այդպիսի ենթադրութիւնը ունենալ գէթ մի որևէ գիտական հիմունք: Մենք գիտենք, որ արեգակը մոլորակային տարածութեան մէջ արձակում է լոյս ու ջերմութիւն, և միայն դորա շնորհիւ հնարաւոր է դառնում կեանքը մեր երկրագնդի վերայ: Բայց եթէ արեգակը իւր էներգիան միայն կորցնէր և զրո փոխարէն նորը չստանար՝ այն ժամանակ նա ինչպէս որ ցոյց են տալիս փոքր հաշիւները, շուտով պէտք է որ հանգչէր ու սառչէր, և սրա հետևանքը այն կը լինէր, որ մեղանում, երկրի վերայ կեանքը կը դադարէր: Սակայն մենք տեսնում ենք, որ պատմական ժամանակներում արեգակը անփոփոխ է մընում, — միակերպ պայծառ ու միակերպ տաք: Այստեղից պարզ է, որ միշտ առաջ է գալիս կորցրած էներգիայի վերանորոգումը: Ի՞նչ կերպով է արդեօք կազմում այդ էներգիայի նոր պաշարը: Ներկայումս՝ ամենից աւելի հաւանական է համարւում արեգակնային գնդի սեղմումի ենթադրութիւնը: Յիրաւի՝ եթէ արեգակի տրամագիծը աստիճանաբար փոքրանում է, ու արեգակն էլ այդ կերպով սեղմւում, այն ժամանակ այդպիսի սեղմումը անհրաժեշտօրէն պէտք է որ առաջ բերէր զգալի քանակութեամբ ջերմութիւն. հետևաբար այդ սեղմումը կազմում է արեգակի էներգիայի վերանորոգման աղբիւրը: Ճշմարիտ է՝ պատմական ժամանակներում ամենալաւ գործիքների օգնութեամբ արեգակի տրամագծի չափը ոչ մի բանով ոլակասած չէր: Սակայն այդ առարկութիւնը էական չէ, որովհետև արեգակի տրամագծի իւրաքանչիւր տարուայ չնչին պակասումը, որ հազարաւոր

տարիները ընթացքում զգալի մեծութեան չի հասնում, լիովին բաւական է, որ երկար ժամանակ ամփոփոխ պահպանուի արեգակի լոյսն ու ջերմութիւնը: Ըստ այսմ՝ վաղեմի ժամանակներում արեգակը աւելի մեծ ծաւալ ունէր, քան այժմ: Իսկ որովհետեւ արեգակի զանգուածը կազմող նիւթի քանակութիւնը նկատելի կերպով չէր կարող փոփոխուել, և թէ այդպիսի փոփոխութիւնը աստղաբաշխները կարող էին նկատել մոլորակների շարժումով, ուստի այն հեռաւոր ժամանակներում արեգակի կարծրութիւնը անհամեմատ պակաս էր, քան այժմ, և նրան, հարկաւ, կարելի է համեմատել այն կարծրութեան հետ, որ ներկայումս յատուկ է գազային միգամածներին, որ մեծ քանակութեամբ ցրուած են երկնային տարածութեան մէջ: Այդպիսի ահագին, բայց չափազանց նսորացած արեգակի միգամածները, ինչպէս որ մենք այժմ գիտենք, կարող էր լուսաւորուել նոյն իսկ ոչ շիկացած դրութեան մէջ: Բայց արձակելով իւր լուսաւոր էներգիան երկնային տարածութեան մէջ՝ այդ միգամածը շարունակ սեղմւում էր, — սկզբում, երբ նա ունէր ջերմութեան ցածր աստիճան՝ արագ, իսկ յետոյ աստիճանաբար տաքանում էր: Վերջապէս ներկայումս, երբ արեգակը հասել է իւր այժմեան ծաւալին և տաքացել մինչև ամենաբարձր ջերմութեան աստիճանը, այդ սաստիկ տաքութիւնը արգելք է հանդիսանում ապագայ սեղմուածքին, որն այդ պատճառով չափազանց դանդաղ է առաջանում: Այն վայրկեանից, երբ արեգակի միգամածը հասել է Նեպտունի շաղի սահմաններից էլ միւս կողմը, մի քանի աստղաբաշխների մօտաւոր հաշուով՝ անցել է տասնեակ, գուցէ և հարիւրաւոր միլիոն տարիներ: Այսպիսով մենք տեսնում ենք, որ այն հիպոտեզը,

թէ արեգակնային համակարգութիւնը ծագումն է առել սկզբնական միգամածից, — լիովին թոյլատրելի է: Մինչև անգամ Լապլասը այն ենթադրութեան եկաւ, որ բոլոր մոլորակների ընդհանուր ծագումը սկզբնական միգամածից էր. նա հիմնւում էր հետեւեալ փաստերի վերայ. 1) բոլոր մոլորակները արեգակի շուրջն են պտտում միևնոյն ուղղութեամբ և մօտաւորապէս միևնոյն հարթութեան վերայ. 2) արբանեակների շարժումն էլ մոլորակների շուրջը ունի նոյն ուղղութիւնը, ինչպէս մոլորակների շարժումը արեգակի շուրջը (բացառութիւն են կազմում Ուրանի և Նեպտունի արբանեակները, որ սակայն յայտնի չէին Լապլասին). 3) մոլորակների ու արեգակի պլատոյար առանցքի շուրջը առաջ են գալիս նոյն ուղղութեամբ, ինչպէս և մոլորակների շաղային շարժումը, և մօտաւորապէս հէնց նոյն հարթութեամբ (բացառութեամբ Ուրան ու Նեպտուն մոլորակների, որ նոյնպէս յայտնի չէր Լապլասին). 4) մոլորակներն ու արբանեակները շարժւում են մօտաւորապէս շրջանաձև շաղով:

Լապլասը ենթադրում էր, որ սկզբնական միգամածը պտտում էր արեւուտեղից դէպի արեւելք, այսինքն այն ուղղութեամբ, ինչ ուղղութեամբ որ մոլորակները պտտում են արեգակի շուրջը, ենթադրելով միաժամանակ, որ միգամածը խիստ շիկացած էր: Լապլասի այս վերջին ենթադրութիւնը անհրաժեշտ էր, բացատրելու արեգակի ջերմութեան բարձր աստիճանը. ներկայումս մենք գիտենք, որ այդպիսի ենթադրութիւն անել անհրաժեշտ չէ, որովհետեւ արեգակը կարող էր հասնել ջերմութեան այն բարձր աստիճանին, որ ունի այժմ շնորհիւ աստիճանաբար սեղմուելուն: Յետոյ Լապլասը այսպէս էր գատում:

Սկզբնական գնատաձև միգամածի պտոյտի շնորհիւ, որ աստիճանաբար արագանում էր, սակաւ առ սակաւ տափականում էր և նրանից հասարակածի վերայ բաժանւում էին օդամանեակներ: Այդ օդամանեակների միջին նիւթը թանձրանալով՝ մոլորակներ դարձան, որ շարունակում էին պտտել արեւմուտքից դէպի արեւելք միգամածի միջուկի շուրջը, այսինքն՝ ապագայ արեգակի շուրջը: Նոյն այդ ուղղութեամբ էլ պէտք է որ առաջ դար և նոր կազմուող մոլորակների պտոյտը իրանց առանցքի շուրջը: Յետոյ՝ ինչպէս որ արեգակնային միգամածից կազմուեցին մոլորակները, հէնց այդպէս էլ, այն մոլորակներից, որոնք գտնւում են հրահեղուկ զրութեան մէջ, կարող էին կազմուել արբանեակներ: Վերջապէս, բացասիկ դէպքում, օդամանեակը կարող էր պահպանել իւր սկզբնական ձևը երևակի (Սատուրնի) օդամանեակի նման: Ընդհանուր դժերով՝ այս է Լապլասի առաջարկած հիպոտեզը մեր արեգակնային համակարգութեան ծագման մասին: Լապլասի ենթադրութեամբ օդամանեակները կենտրոնական միգամածից բաժանուել են աստիճանաբար և դրա համար մի մոլորակ որքան հեռու է կանգնած արեգակից, այնքան նա առաջ է կազմուել: Յետոյ՝ որչափ որ սկզբնական միգամածը սակաւ առ սակաւ սկսեց թանձրանալ, կարծրանալ, — նիւթի կարծրութիւնը, որից նա գոյացել է, պէտք է որ կենտրոնին մօտենալու չափով էլ մեծանար և միգամածի ծաւալի չափով էլ փոքրանար, շնորհիւ օդամանեակների նրանից բաժանուելուն և նրա սեղմումին: Սրանից անհրաժեշտ է եզրակացնել, որ մոլորակների արեգակից ունեցած տարածութեան մեծանալովը նրանց կարծրութիւնը պէտք է աստիճանաբար փոքրանար: Իսկապէս Փայլածու (Մերկուրի), Արուսեակ, (Վեներա),

երկիր ու Հրատ (Մարս) մոլորակների կարծրութիւնը բաւական մօտ են միմիանց, և թէև նրանք իրանց կարծրութեամբ գերազանցում են միւս մոլորակներին, որոնց համար իր հերթին գոյութիւն ունի որոշ համաձայնութիւն, բայց և այնպէս միւս մոլորակների կարծրութեան կանոնաւոր նուագումը այն օրէնքով չի կատարւում, ինչպէս այդ պէտք էր սպասել ըստ Լապլասի հիպոտեզի: Եւ այս հանգամանքը ներկայանում է ամենալուրջ առարկութիւններից մէկը, Լապլասի հիպոտեզի դէմ: Նոյն կերպով Ուրանի ու Նեպտունի արբանեակների հակառակ ուղղութեամբ պլտոյտները, ինչպէս և այդ մոլորակների շարժումները արեւմուտքից դէպի արեւելք բոլորովին չեն համաձայնում Լապլասի հիպոտեզին: Այդ ենթադրութեանը հակասում է նոյնպէս Յորոսի* պտոյտը Հրատի շուրջը: Լապլասի սկզբնական ենթադրութեան համաձայն ոչ մի մոլորակի և ոչ մի արբանեակի համար կենտրոնական մարմնի շուրջը պտտելու ժամանակը չի կարող աւելի կարճ լինել, քան ժամանակամիջոցը, երբ վերջինս պտտում է իւր առանցքի շուրջը: Ի նկատի ունենալով, որ Լապլասի հիպոտեզով հնարաւոր չէ բացատրել մեր արեգակնային սխտեմի կազմակերպութեան բոլոր մանրամասնութիւնները, այդ ենթադրութիւնը նորագոյն ժամանակում ենթարկուեց մի քանի ձևափոխութիւնների, որոնցից գլխաւորները մենք այստեղ կը քննենք:

II.

Լապլասի ենթադրութեան մեջ ներմուծած նորագոյն մեխանիստիկաները:

Ըստ նորագոյն գիտական հայեացքների՝ սկզբնական միգամածը կարող էր և չգտնուել գազանման զրու-

* չրատի արբանեակներից մէկը:

թեան մէջ, աւելի շուտ բազկացած էր առանձին հեղուկ կամ կարծր մասնիկներից, որոնցից իւրաքանչիւրը շրջապատուած էր գազանման թաղանթով: Եւ միմիայն յետոյ միգամածի միջուկը, կամ այլ կերպ ասած՝ մեր արեգակը անդադար սեղմումի ու ջերմութեան աստիճանի սաստիչութեան շնորհիւ կարող էր գազանման դառնալ: Ի հաստատութիւն այս գիտական հայեացքի ծառայում է Երևակի շրջապատող օդամանեակը: Ամենից առաջ Մակսուէլի տեսական հետազոտութիւնները ցոյց տուին, որ այդ օդամանեակը անշուշտ պէտք է բազկացած լինի անհամար առանձին մասնիկներից, որովհետեւ հախառակ դէպքում, այսինքն եթէ նա ներկայացնէր թանձր, կարծր կամ հեղուկ զանգուած, նա անխուսափելի կերպով մաս մաս կը լինէր ու կընկնէր մոլորակի վերայ: Մակսուէլի այս տեսութիւնը փայլուն կերպով հաստատուեց նորագոյն սպեկտրային դիտողութիւններով, որոնք, ցոյց տուին, որ մոլորակին մօտ եղող օդամանեակի մասնիկները պտտում են մեծ արագութեամբ, քան հեռու եղողները, իսկ այդ հնարաւոր է միայն այն դէպքում, եթէ օդամանեակը բազկացած է առանձին անթիւ փոքրիկ արբանեակներից:

Որպէսզի բացատրենք, թէ ինչո՞ւ համար մի կողմից բոլոր արտաքին, միւս կողմից բոլոր ներքին մոլորակները ունին մօտաւորապէս միևնոյն կարծութիւնը, այնինչ առաջի խմբին պատկանող մոլորակների կարծութիւնը տարբերում է երկրորդ խմբին պատկանող մոլորակների կարծութիւնից, կարելի է ենթադրել, որ սկզբում միգամածը բաժանուէլ է մի քանի մասերի, օրինակ երկու մեծ օդամանեակների, որոնց ընդհանուր կենտրոնում գտնուում էր միջուկը և որ միևնոյն օդամանեակի զանազան մասերում

կարծրութիւնը մօտաւորապէս միևնոյնն էր, բայց սրա հետ միասին օդամանեակի կենտրոնին մօտ եղողների կարծրութիւնը աւելի էր, քան հեռու եղողների կարծրութիւնը: Եթէ այս օդամանեակներից մէկը արտաքին մոլորակների սկզնապատճառը դարձաւ, իսկ միւսը՝ ներքին մոլորակների, այն ժամանակ իրօք հետազօտուած մոլորակների կարծրութիւնները հնարաւոր կը լինի բացատրել:

Այնուամենայնիւ մի քանի աստղաբաշխներ ենթադրում են, որ բոլորովին համասեռ չեղող նիւթի դասաւորումը հասարակածի երկայնութեամբ, որ պտտում է սկզբնական միգամած գնտի շուրջը, այս վերջինից պէտք է որ բաժանուէլին առանձին գնտեր և ոչ ամբողջ օդամանեակներ: Հէնց այդ գնտերը և սկիզբ էին տալիս մոլորակներին: Իսկ օդամանեակը կարող էր բաժանուել սկզբնական միգապատ զանգուածից միայն նիւթի լիովին միասեռ դասաւորութեան միջոցին ուսուցման երկարութեամբ, որ կազմուել է հասարակածի վերայ այդ զանգուածի պտոյտի պատճառով: Իսկ որովհետեւ նիւթը լիովին հաւասարաչափ կարող էր դասաւորուել միմիայն բացառիկ դէպքերում, հետևաբար և օդամանեակի բաժանումը արեգակից կամ մոլորակներից պէտք է վերագրել հագուագիւտ երևոյթների շարքին: Ըստ այսմ՝ այնպիսի օդամանեակները, որպիսին մենք վերևում տեսանք, պէտք է բազկացած լինին չափազանց մեծաքանակ առանձին մասնիկներից կամ մարմիններից: Այդպիսիներից են. փոքր մոլորակների օդամանեակները, որոնք Հրատի և Լուսնիթագի (Իւպիտերի) մէջտեղն են բռնում, և այն օդամանեակները, որոնք շրջապատում են Երևակ մոլորակը:

Յետոյ, չափազանց հետաքրքիր է նոյնպէս Ռօշի

փորձը, որով նա բացատրում է, ինչն է այն տարածութիւնները, որոնք բաժանում են մոլորակները արեգակից, հպատակում են որոշ օրէնքի, այն է՝ Բօդէի օրէնքին: Ռօշը ֆիզիքական օրէնքները, միացնելով գազային մարմնի սեղմումի հետ, յօրինեց մաթեմատիկական ֆօրմուլա, որ տալիս է յարմար մոմէնտում այդ մարմնի շառակիղը: Հաշուելով այդ մարմնի շառակիղը մոմէնտների համար առանձին հաւասար ժամանակամիջոցում, նա ստացաւ մի շարք թուեր, որոնք փոփոխւում էին մօտաւորապէս Բօդէի օրէնքով: Այստեղից Ռօշը եզրակացրեց, որ մոլորակները մեր արեգակնային համակարգութեան մէջ գոյացել էին մէկը միւսի յետեից հաւասար ժամանակամիջոցում, այսինքն, որ Հրատը այնքան մեծ է հասակով երկրից, որքան երկիրը մեծ է Արուսեակից և այն: Այն հանգամանքը, որ Նեպտունի համար Բօդէի օրէնքը չի տալիս լիովին բաւարար հետևանք (ըստ Բօդէի օրէնքի՝ 38,8, մինչդեռ իսկական տարածութիւնն է 3⁰, 1), Ռօշի կարծիքով՝ այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կազմուել են Նեպտունը և Ուրանոսը, աւելի կարճ է քան միւս մոլորակների կազմութեան համապատասխան ժամանակամիջոցը: —

Բայց Ռօշի այս ենթադրութիւնը բացատրելով մոլորակների տարածութեան օրէնքը, չի բացատրում հետագոտուած կարծրութիւնները:

Ի դէպ նկատենք, որ Ռօշի կարծիքով Երևակի օղամանեակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մոլորակների ազդեցութիւնից մանր մասերի բաժանուած գունդ, որից իւր սկիզբն է առնում աբբանեակը: —

III.

Մոլորակների պտոյտը. Փայի ենթադրութիւնը.

Այժմ տեսնենք ինչ կերպով կարելի է բացա-

արել Ուրանոսի և Նեպտունի հակադարձ պտոյտը:

Ենթադրենք թէ օղամանեակը, որ կազմուել էր արեգակի հասարակածի երկարութեամբ, ունի ամենուրեք միևնոյն կարծրութիւնը: Այդպիսի դէպքում աւելի բնական կը լինի ենթադրել, որ մոլորակների կազմակերպութեան միջոցին նրա կենդրոնը կը բռնի մի կէտ, որ հաւասարապէս հեռու է օղամանեակի արտաքին ու ներքին եզրերից: Բայց ձգողական ոյժի ազդեցութեան շնորհիւ օղամանեակը, որ բազկացած է բազմաթիւ մանր մասնիկներից, պէտք է որ պտոյտ գործէ կենարոնական մարմնի շուրջը որպէս արբանեակներ խումբ. այսինքն՝ այն մասնիկները, որոնք մօտ են արեգակին պէտք է ունենան աւելի մեծ արագութիւն, իսկ առաւել հեռու գտնուող մասնիկները՝ աւելի փոքր: Այս պատճառով ձևակերպուած մոլորակը պէտք է որ հակադարձ պտոյտ գործէ, եթէ օղամանեակի բազազրիչ մասը կազմող մասնիկները ունին ուղիղ շարժում: Հետևաբար այսպիսի պայմաններում կազմակերպուեցան Ուրանոսն ու Նեպտունը:

Բոլորովին այլ երևոյթներ առաջ պիտի գան այն դէպքում, երբ մասամբ արեգակի ձգողական ազդեցութեան տակ, մասամբ միգամածի շարունակ սեղմումի պատճառով օղամանեակի մասնիկները արդէն կարողացել են կարգաւորուել այնպէս, որ օղամանեակի կարծրութիւնը մեծանում է արտաքին ծայրերից դէպի ներքինը: Այս դէպքում մոլորակների կազմակերպուելու միջոցին նրա կենդրոնը անկասկած կբռնէ այն կէտը, որ գտնուում է աւելի մօտ օղամանեակի ներքին ծայրին, քան արտաքինին: Այսպիսի դէպքում ունեցած գերիշխող ազդեցութիւնը նոր մոլորակի պտոյտի ուղղութեան վերայ պատկանում է օղամանեակի մասնիկներին, որոնք գտնուում են նրա ար-

տաքին ծայրի մօտ: Հետևաբար, նոր կազմակերպուող մոլորակը պէտք է ունենայ ուղիղ պտոյտ, եթէ օդամանեակի մասնիկները արեգակի շուրջը պտտուելիս ունենային նոյնպէս ուղիղ շարժում:

Այս կերպ բացատրելով Ուրանոսի և Նեպտունի հակադարձ պտոյտը, մենք արդէն առանց դժուարութեան կը հասկանանք, թէ ինչո՞ւ այդ մոլորակների արբանեակները պէտք է պտոյտ գործեն նրանց շուրջը նոյնպէս հակառակ ուղղութեամբ:

Հէնց նոր առաջ բերած բացատրութիւնը ենթադրել է տալիս, որ սկզբնական միգամածից մոլորակների կազմակերպուելու միջոցին օդամանեակները բաժանուում էին:

Բայց կարելի է Ուրանոսի և Նեպտունի հակադարձ պտոյտի մասին ուրիշ բացատրութիւններ էլ տալ: Այս տեսակէտից արժանի է յիշել Փայի ենթադրութիւնը: Նրա ենթադրութեամբ մոլորակները գընտերից են կազմուել, որոնք բաժանուել են սկզբնական միգապատ զանգուածից: Քանի որ այդ միգապատ զանգուածի մէջ գեռես կենտրոնում խտութիւն չէր նշմարուում, միգամածի մասնիկները ձգուում էին ուղիղ յարաբերական տարածութեամբ: Դրանից յետոյ, երբ միգապատ զանգուածի կենտրոնում առաջ եկաւ նիւթի որոշ կարծրութիւն, այսինքն կազմուեց արեգակը, միգապատ զանգուածի մասնիկները սկսեցին շարժուել կեպլերի օրէնքով, և նոր կազմակերպուած արեգակը սկսեց իրան քաշել այդ մասնիկները հակառակ յարաբերական ուժով տարածութեան քառակուսուն, այսինքն տիեզերական ձգողութեան օրէնքի համաձայն:

Արեգակի դեռ կազմակերպուելու միջոցին

ձգողական ոյժը բաղկանում էր երկու մասից, որոնցից առաջինը ուղիղ յարաբերական էր տարածութեան, իսկ երկրորդը— հակառակ յարաբերական տարածութեան քառակուսուն: Ըստ այսմ սկզբում առաջին մասը գերիշխող էր. ժամանակի ընթացքում գերիշխողութիւնը անցաւ երկրորդ մասին: Վերջապէս հասաւ այն վայրկեանը, երբ առաջին մասը դարձաւ զրօ, և այն ժամանակից ի վեր ձգողութիւնը լինում է տիեզերական ձգողականութեան օրէնքի համաձայն:

Այն մոլորակները, որոնք կազմակերպուած են միգամածից, երբ նա գտնուում էր զարգացման սկզբնական շրջանում, այսինքն երբ գերիշխող էր հանդիսանում ոյժի առաջին մասը, ստացան ուղիղ պտոյտ, որովհետեւ այդ ժամանակում միգամածը պտոյտ էր գործում իր առանցքի շուրջը, որը անցնում էր նրա կենտրոնով որպէս մի ամբողջութիւն, այսինքն կենտրոնին մօտ եղող մասնիկները ունէին փոքրը արագութիւն, իսկ աւելի հեռու գտնուող մասնիկները պտոյտ էին գործում մեծ արագութեամբ: Իսկ Ուրանոս ու Նեպտուն մոլորակները Փայի ենթադրութեամբ արեգակի ձևակերպուելուց յետոյ են կազմակերպուել, այսինքն այն ժամանակ, երբ գերիշխողութիւնը արդէն անցել է ոյժի երկրորդ մասի կողմը: Այդ ժամանակ միգամածի մասերը պտոյտ էին գործում արդէն կազմակերպուած արեգակի շուրջը կէպլերի օրէնքների համաձայն. այսինքն՝ արեգակի մօտ գտնուող մասնիկները ունէին մեծ արագութիւն, իսկ հեռու գտնուողները՝ փոքր: Սրանով լիովին բացատրուում է Ուրանոս և Նեպտուն մոլորակների հակադարձ պտոյտը, որոնք այս կերպով Փայի ենթադրութեամբ միայն մնացեալ մոլորակներից ու արեգակից հասակով փոքր են, բոլոր մնացեալ մոլոր-

րակները ըստ իրենց կազմակերպութեան ժամանակի՝ մեծ են արեգակից:

Վերոյիշեալ բացատրութիւնից տեսնում ենք, որ որքան հասարակ ու պարզ է այսպէս կոչուած (необы- лярный) հիպոտեզի ընդհանուր գաղափարը, որ առաջին անգամ առաջարկեց Կանտը, իսկ յետոյ՝ գիտական հիմքերի վերայ գարգացրեց Լապլասը, նոյնքան էլ դժուար է բացատրել զանազան պարագաներն ու մանրամասնութիւնները մոլորակային համակարգու- թեան կազմակերպման մէջ:

IV.

Գ ա ռ վ ի ն ի հ ե ս ա զ օ ս ո շ ք ի շ ն ն ե ռ ք .

Աշխարհների կազմակերպութեան հիպոտեզին իբրև չափազանց կարևոր ու հետաքրքիր լրացում ծառայում են յայտնի բնագէտի որդու՝ Գ. Գարվիների հետազօտութիւնները, որ վերաբերում են կենտրո- նական մարմնի և նրա շուրջը պտտուող մարմնի հո- սանքի ազդեցութեանը: Այդպիսի ազդեցութիւնը հնարաւոր է իհարկէ միայն այն դարաշրջանում, երբ երկու մարմինները դեռ հասած չեն բացարձակ կարծր գրութեան:

Դառնանք այն համակարգութեան, որ բաղկացած է երկրից ու լուսնից և տեսնենք՝ ինչո՞ւն է կայանում հոսանքից առաջ եկած ազդեցութիւնը այս համա- կարգութեան վերայ: Ենթադրելով, որ մոլորակները կազմուել են արեգակից, իսկ արբանեակներն էլ կազմուել են մոլորակների գնտերի կենտրոնական միգապատ զանգուածի բաժանման շնորհիւ, պէտք է ենթադրենք, որ լուսինը մի ժամանակ շփուում էր երկրի մակերևոյթի հետ: Հաշիւները ցոյց են տալիս, որ այդ ժամանակ լուսինը երկրի շուրջը պէտք է

լրիւ պտոյտ գործէր երեք ժամուայ մէջ:

Միւս կողմից նոյնպէս դժուար չէ հաշուել, որ մեր երկիրը շատ դարեր առաջ կարող էր գործել կատարեալ պտոյտ իւր առանցքի շուրջը, ամե- նաքիչը երեք ժամում, առանց կտոր կտոր ցրուելու վտանգին ենթարկուելու: Ակներև է, որ երկրի այդպի- սի պտոյտի յարատեւութիւնը իսկապէս այն ժամանա- կումն էր, երբ լուսինը դեռ կպած էր երկրի մակե- րևոյթին: Երբ լուսինը բաժանուեց երկրից, սկսուե- ցին հրահեղուկ լաւայի հսկայական ժայթքումները, որոնք ոչ թէ բաց ովկիանոսում էին առաջանում, որ այն ժամանակ չկար, այլ երկրի բոլոր թանձր զանգուածի վրայ: Այդ ուժգին հոսանքների պտտ- ճառով երկրի պտոյտը դանդաղում էր, լուսինը քանի գնում աւելի հեռանում էր երկրից, և նրա պտոյտի արագութիւնն այս վերջինիս շուրջը շուտով նուա- գում էր: Սկզբում այս փոփոխութիւնները արագ էին կատարւում, շնորհիւ հսկայական հոսանքների չափե- րին. բայց երբ սակաւ առ սակաւ լուսինը և երկիրը հեռացան միմիանցից, որսշ հեռաւորութեան վերայ այդ փոփոխութիւնները աւելի դանդաղ էին առաջ գալիս: Վերջապէս շատ միլլիօնաւոր տարիներից յե- տոյ, երկիրը իւր առանցքի շուրջը սկսեց պտտուել ուղիղ 24 ժամուայ ընթացքում. իսկ լուսինը հեռա- ցաւ երկրից 360,000 վերստ ու սկսեց դառնալ երկ- րի շուրջը 27¹/₃ օրուայ մէջ:

Բոլոր այս փոփոխութիւնները դեռ յետոյ էլ պի- տի շարունակուին, բայց միայն չափազանց դանդաղ կերպով: Մեր մտքին անհասանելի ժամանակամիջո- ցից յետոյ երկրի իւր առանցքի շուրջը դառնալու ժամանակաշրջանը նորից հաւասար պիտի լինի լուս- նի՝ երկրի շուրջը կատարած լրիւ պտոյտի երկարու-

թեանը. այս շրջանառութիւնների տևողութիւնը այն ժամանակ կը հասնի մինչև 1400 ժամի: Այն ժամանակ ոչ միայն լուսինը մի կողմով դարձած պիտի լինի երկրին, այլ նոյնպէս երկիրն էլ միշտ միևնոյն կողմով դարձած պիտի լինի լուսնին և նրանց՝ միմիանց վերայ ունեցած մակնթացութիւնների ազդեցութիւնը բոյորովին կը դադարի:

Բայց այդ ժամանակ մեր համակարգութեան վերայ ազդեցութիւն պիտի ցոյց տայ նաև արեգակի մակնթացային գործողութիւնը: Թէ և նա մեծ չէ, բայց շնորհիւ նրա աստիճանաբար բարդութուն, լուսնի՝ երկրի շուրջը դառնալու ժամանակը, ճիշտ է, չափազանց դանդաղ, բայց և այնպէս պիտի սկսի կարճանալ, ու լուսինը քիչ-քիչ պիտի մօտենայ երկրին: Ի միջի այլոց՝ Ռօշը ցոյց տուեց, որ լուսինը երկրին մօտենալով հանդերձ, այնուամենայնիւ չի կարող ընկնել նրա վերայ, և որ լուսնի ու երկրի մէջ եղած տարածութիւնը կարող է փոքրանալ միմիայն մինչև որոշ աստիճան, այսինքն մինչև 16200 վերստ: Երբ նա կը հասնի այդ աստիճանին, այն ժամանակ լուսինը պէտք է ցիր ու ցան լինի փոքրիկ կտորներով, շնորհիւ երկրի ձգողական անհաւասար ազդեցութեանը լուսնի այս կամ այն կէսի վերայ:

Երևակի օղամանեակների ծագումը կարելի է բացատրել հէնց նրանով, որ մոլորակի արբանեակներից մէկը մօտեցել է նրա սահմանի այն տարածութեամբ, որին հասնելով նա ցաք ու ցրիւ պէտք լինէր փոքր մասնիկներով: Եւ յիշուի, Ռօշի հաշուին նայելով՝ այն տարածութիւնը, որ բաժանում է երեւակից մինչև օղամանեակի արտաքին եզրը, բաւարարութիւն է տալիս այն տեսական պայմաններին, որոնց ժամանակ պէտք է առաջ դար այդպիսի

սարսափելի կատաստրոֆա:

Այստեղ անհրաժեշտ է նկատել, որ մանր մոլորակների օղամանեակների ծագումը մեր արեգակնային համակարգութեան մէջ կարող չէ բացատրուած լինել մէկ մոլորակի պայթումի շնորհիւ, ինչպէս այդ ցոյց տուեց ճիշտ հաշուով Ամերիկացի Նիւկոմբ աստղաբաշխը: Այս դէպքում ամենից հաւանականն այն է, որ Լուսնիթագը իւր գօրեղ գործողութեամբ արեգակից բաժանուած գնդին խանգարեց մի դանդուածի մէջ համախմբուելու, որ բաղկացած էր բազմաթիւ անհամար մասնիկներից, և այդ գունդը վերջի վերջոյ դարձաւ փոքրիկ մոլորակների խումբ:

Ներկայումս կործանում է սպառնում մեր հարևան Հրատի մի արբանեակին, Փօբոսին: Փօբոսը Հրատի շուրջը պտոյտ է գործում սոսկալի արագութեամբ կոտարելով ամբողջ շրջանառութիւնը $7\frac{1}{2}$ ժամուայ ընթացքում, գտնուելով նրա մակերևոյթից ընդամենը 6000 վերստ հեռաւորութեան վերայ: Մոլորակը իւր առանցքի շուրջը ամբողջ շրջանառութիւնը կատարում է 24 ժամուայ մէջ. իսկ նրա վրայի հոսանքները հետևում են նրա արբանեակին աւելի արագ, քան ինքը մոլորակը դառնում է իւր առանցքի շուրջը. այս պատճառով նրանք ձգտում են մեծացնել մոլորակների պտոյտների արագութիւնը ու նուազեցնել արբանեակի պտոյտը: Դարվինը ցոյց տուեց, որ ընդհանրապէս, եթէ մոլորակի իւր առանցքի շուրջը դառնալու ժամանակը կարճ է արբանեակի մոլորակի շուրջը պտտելու ժամանակից, այն ժամանակ արբանեակը հեռանում է այս վերջինից. հակառակ դէպքում արբանեակը մօտենում է մոլորակին:

Կնշանակէ թէ՛ Հրատը դանդաղ, բայց շարունակ

իրան է քաշում իւր Ֆօբոս արբանեակին, և այս վերջինիս ապագայում սպառնում է վտանգ ցաք ու ցրիւ վինելու:

Ընդգծենք մի անգամ էլ, որ դարաշրջանները, որոնց ընթացքում ուժգին հոսանքների գործողութիւնը այս կամ այն երկնային մարմինների վերայ ազդեցութիւն է գործում, չափազանց մեծ է. նրանց պէտք է հաշուել միլիոնաւոր տարիներ:

V.

Հաստատու աւսդերի զարգացրեալի զանազան շրջանները:

Ծանօթացնելով ընթացողներին մեր արեգակնային համակարգութեան զանազան մարմինների ծագման նորագոյն հայեացքների հետ՝ այժմ անցնենք աստղերի և աստղային համակարգութիւնների հարցի հետազոտութեանը:

Որովհետև արեգակը ոչ այլ ինչ է, բայց եթէ մի հաստատուն աստղ, հետևաբար և իւրաքանչիւր աստղը, իւր սկզբնական զարգացման շրջանում պէտք է ներկայացնէր նօսր միզապատ գանգուած, սրը ունի ջերմութեան ցածր աստիճան: Գնդի ձև ստանալով առանձին մասնիկների գէպի միզապատ գանգուածի կենտրոնը ձգուելու շնորհիւ և աստիճանաբար սեղմուելով, աստղը վերջ ի վերջոյ հասնում մինչև ամենաբարձր ջերմութեան աստիճանին և շիկանում է. յետոյ սակաւ առ սակաւ նա սկսում է մարել, մինչև որ վերջապէս բոլորովին դադարում է լուսաւորելուց և անցնում է այն խաւար մարմինների շարքը, որոնք երևան են գալիս միմիայն բացառիկ դէպքերում: Բոլոր աստղերը իրանց լուսապատկերով (սպեկտր) կարող են բաժանուել երեք տիպերի: Առաջին տիպի

լուսապատկերը համապատասխան է այն դարաշրջանին, երբ աստղերի ջերմութեան աստիճանը հասնում է ամենամեծ բարձրութեան. երկրորդ տիպի լուսապատկերը բնորոշում է աստղերի ամենաուշ զարգացման շրջանը, երբ նրա ջերմութեան աստիճանը սկսում է իջնել. վերջապէս՝ երրորդ տիպի լուսապատկերը համապատասխանում է անմիջական նախընթաց աստղերի շիջման դարաշրջանին:

Բայց ոչ միայն իւրաքանչիւր անհատի կեանքը, այլ մինչև անգամ ամբողջ մարդկային ազգի գոյութեան յարատևութիւնը այնքան կարճ է, որ մենք չենք կարող դիտել միևնոյն աստղը նրա զարգացման զանազան շրջաններում. այս պատճառով հարկ է լինում բաւականաճառ դիտելով զանազան աստղեր, որոնք գտնուում են միաժամանակ զարգացման զանազան շրջաններում:

Ուշադրաւ է, որ մենք հանդիպում ենք համեմատաբար շատ քիչ աստղերի երրորդ տիպի լուսապատկերով: Այս ցոյց է տալիս այն, որ զարգացման վերջի շրջանը կազմում է միայն չնչին մասը աստղերի ամբողջ կեանքում: Միւս կողմից աստղերի ամենամեծ մասը իրանց լուսապատկերով պատկանում են առաջին տիպին. այստեղից մենք եզրակացնում ենք, որ աստղերի զարգացման առաջին շրջանը ամենայարատևողն է: Այն ժամանակաշրջանը, որը բնորոշում է երկրորդ տիպի լուսապատկերով, և որին էլ պատկանում է ի միջի այլոց մեր արեգակը, իւր յարատևողութեամբ ըստ երևոյթին միջին տեղն է բռնում առաջին և վերջին շրջանի մէջ: Որովհետև փոփոխական աստղերի մեծ մասը, բացառութեամբ Ալգօլա տիպի աստղերի, ունի երրորդ տիպի լուսապատկեր, այստեղից եզրակացնում ենք, որ պայծա-

ուութեան փոփոխութիւնը, որ առնչութիւն ունի այս աստղերին յատուկ կարմիր գոյնի հետ, նշան է աստղի մեծ հասակ ունենալուն և այն բանին, որ նրանք շուտով հանգչելու են: Դրա հակառակ Ալգոլա տիպի փոփոխական աստղերը, որոնց փոփոխութիւնը բացատրուում է խաւարումներով և որոնք ունին առաջին տիպի լուսապատկեր, պատկանում են համեմատաբար երիտասարդ աստղերի թուին:

Ուշագրաւ է նայնպէս, որ մեր արեգակի մօտ գտնուող աստղերը ունին առաւելապէս երրորդ տիպի լուսապատկեր, այնինչ այն աստղերը, որոնք ծիրկաթնի թուում են, իրանց լուսապատկերով պատկանում են առաջին տիպին: Հետևաբար մեզ աւելի մօտ գտնուող աստղերը իրանց զարգացմամբ մի քիչ առաջ են անցել հեռաւոր աստղերից:

Տիեզերքի չլուծուած առեղծուածները.

(Գ. Շարվերկերի)

Տիեզերքի տարածութիւնը անսահման է. լուսատու արեգակների թիւը, որոնց մենք անուանում ենք հաստատուն աստղեր, չափազանց մեծ է. այդ անթիւ արեգակների շուրջը ամենայն հաւանականութեամբ պատուում են մոլորակներ, ինչպէս և մեր արեգակի շուրջը. ամենահին ժամանակներից սկսած մոլորակները և արեգակները ծագում, զարգանում և կորչում են. այս ամենը ճշմարտութիւններ են, որոնք ներկայումս ընդունուած են բոլոր ուսեալ մարդկանց շրջանում: Այդ ճշմարտութիւնները վերջին երկու դարերի գիտութեան արգիւնք են: Այս տեսակէտից՝

անցեալ դարերի համեմատութեամբ մենք այնքան ենք առաջ գնացել, որ կարող է այնպէս թուալ, թէ եկող սերունդներին ոչինչ չի մնաց այլևս հետազօտելու, և որ իբր թէ տիեզերական առեղծուածները մօտ են վերջնական լուծման:

Բայց այսպիսի ենթադրութիւնը վերին աստիճանի սխալ կը լինէր: Մեր գիտութիւնը, որ լուծել էր բոլոր հին առեղծուածները, կանգ առաւ նոր առեղծուածների դէմ, որոնց գոյութեան մասին առաջ ոչ ոք ենթադրել անգամ չէր կարող: Ճշմարիտ է, մենք այժմ գիտենք, որ ոչ թէ արեգակն է պտտում երկրի շուրջը, այլ երկիրը իւր քոյր մոլորակների հետ պտտում է ճառագայթների թագուհու շուրջը, որ մայրն ու կենտրոնն է մեր մոլորակային համակարգութեան: Բայց այստեղ մեր առաջ երևան է գալիս հարցերի մի ամբողջ շարք. — թէ մեր արեգակը ինչպիսի յարաբերութեան մէջ է գտնուում մնացեալ անհամար արեգակների հետ: Արդեօք շարժում է նա երկնային տարածութեան մէջ, թէ կանգնած է անշարժ: Եւ եթէ նա շարժում է, դէպի ո՞ւր է ընկնում նրա ճանապարհը, որով և մենք, իբր արեգակի ուղեկիցներ, ընթանում ենք:

Աստղաբաշխութիւնը այս հարցին տալիս է հետևեալ պատասխանը. մեր արեգակնային համակարգութիւնը միայնակ զեռեղուած է երկնային տարածութեան մէջ, նա ահագին տարածութեամբ բաժանուած է արեգակնային համակարգութիւններից, կաթնածրից և ճմիւս հաստատուն աստղերից: Դժուար է մեզ առաւել կամ պակաս պարզ մտապատկեր կազմել այն մեծութիւնների մասին, որոնց հետ պէտք կը լինի մեզ այստեղ գործ ունենալ: Դատենք այսպէս. այն շրջանը, որ ամեն տարի գծում է երկիրը արևի

շուրջը, այնքան մեծ է, որ արագ գնացքը օր ու գիշեր, ժամը 100 կիլոմետր կարելով (կիլոմետրը = $\frac{15}{16}$ վերստի) միայն 340 տարուց կարող է բոլորել այդ շրջանը: Առնենք այդ անագին տարածութիւնը իբր տարածութիւն որոշող չափ, որը բաժանում է հաստատուն աստղերը միմիանցից և թող սովորական շրջանը ներկայացնէ շաւիղ, որտեղից անցնում է երկիրը: Այն շրջանը, որի տրամագիծը հաւասար է մօտաւորապէս 18 միլիմետրի (միլիմետրը = $\frac{1}{100}$ մետրի), ենթադրենք թէ՛ մեր առաջն է: Եւ այսպէս, թող այդ շրջանը ներկայացնէ արևի շուրջը գտնուող երկրի պարունակը: Ամենամօտ եղած հաստատուն աստղը այն ժամանակ կը գտնուէր $2\frac{1}{2}$ կիլոմետր տարածութեան վերայ: Քնար համաստեղութիւնից Վեգա գեղեցիկ աստղը, որին մենք գարնան գիշերները տեսնում ենք հիւսիս—արևելքում, ամառը գազաթնակէտի (գենիթ) մօտ (երկնքի ամենաբարձր կէտում), իսկ աշնանը—հիւսիս-արևմուտքում, այդ գէպքում նա հեռացած կը լինէր մօտաւորապէս 15 կիլոմետր այդ շրջանից: Եթէ կամենայինք արտայայտել երկնային տարածութիւնը կիլոմետրով կամ մղոններով, կըստանայինք ամենաերկար թիւ, որը մտքով ըմբռնել ու հասկանալ անկարող էինք: Այդ պատճառով ես փորձեցի ընթերցողին հնարաւորութիւն տալ աւելի լաւ հասկանալու այդ տարածութիւնները, հաշիւների հիմք դնելու վերևում առաջ բերած չափը:

Մեր ժամանակի առաւել նշանաւոր գիւտերից մէկը մենք պարտական ենք համարել գիտութեան զբոսած այն փաստը, որ մեր արեգակը շարժւում է դէպի Վեգայի ուղղութեամբ մօտաւորապէս մի վայրկեանում 16 կիլոմետր արագութեամբ: Ներկայումս մենք հարիւր միլիոն մետր մօտ ենք Վեգային, քան

որանից տասը տարի առաջ. հէնց այդպիսի արագութեամբ էլ մենք շարունակում ենք մեր թռիչքը: Երբ, սրտեղ և ի՞նչ կերպով սկսուեց այդ ճանապարհորդութիւնը ու երբ և սրտեղ պիտի վերջանայ: Շարժւում են արդեօք հաստատուն աստղերը, որոնք մեզ թւում են իբր կանգնած մի տեղում: Այս հարցերը շօշափում են տիեզերքի չլուծուած ամենամեծ անեղծուածներից մէկը: Գիտութիւնը մի քանի հիմնական փաստերով ենթադրում է, որ ոչ մի աստղ հաստատուն չէ, և որ բոլոր երկնային մարմինները շարժւում են անհուն տարածութեան մէջ, բայց ինչպէս է նրանց ուղին, ինչ է նրանց շարժման նպատակը, ինչ կերպով սկսուեց շարժումը—նա այդ բացատրել անկարող է:

Աստղաբաշխները մեծ ճշտութեամբ որոշեցին, որ մեր ամենաշատ լուսաւոր հաստատուն աստղերից մի քանիսը նոյնպէս շարժւում են, բայց աւելի կամ պակաս ճշտութեամբ չափել այդ շարժումը նրանք պիտի կարողանան միայն մի քանի հարիւր տարուց յետոյ: Չափազանց դժուարին ու մաթեմատիկական երկարատե հաշիւների հիման վրայ աստղաբաշխները եկան այն եզրակացութեան, որ եզնարած համաստեղութիւնից հիանալի Առկտուր աստղը շարժւում է մէկ վայրկեանում առնուազն 300 կիլոմետր արագութեամբ: Չնայելով այս բանին, մեզ թւում է, որ նա չորս հազար տարուայ ընթացքում երկնքի վերայ կարողացել է անցնել հազիւ մի փոքրը տարածութիւն: Աստղաբաշխութեան համար չլուծուած հարց է նմանապէս տիեզերքի մեծութիւնը: Մենք հասարակ աչքով տեսնում ենք մի քանի հազար, իսկ ամենաուժեղ հեռագիտակների շնորհիւ մի քանի միլիոն հաստատուն աստղեր, այսինքն արեգակներ:

Բայց մեր հեռագրիտակով տեսնող աչքը դեռ մինչև այժմ չէ թափանցել մեր տեսած տիեզերքի հաստատուն աստղերի սահմանի ամենավերջին ծայրը. և եթէ այդ մեզ յաջողուէր, այն ժամանակ առաջ կը գար մի նոր հարց, այսինքն. ի՞նչ է գտնուում մեր երկնակամարի վերայ եղած աստղերի յետի կողմը: Գտնուում է արդեօք այնտեղ անհուն, դատարկ տարածութիւն, կամ հեռուում գետեղումձ են արդեօք աստղային աշխարհներ, որոնցից մեզ մօտ ոչ մի ճառագայթ չի կարող հասնել:

Հարկաւ՝ այս հարցին անկարող ենք պատասխանել: Բայց մեր երկնակամարի աստղերի սահմաններում գիտութիւնը ամբողջ մի շարք գիտողութիւններ արաւ, որ պէտք է համարել մարդկային հոգու ամենամեծ նուաճումները: Կաթնածիրը այս պլպլացող աստղերի դօտին, որը մեզ զմայլեցնում է պարզ գիշերին, բազկացած է բազմաթիւ միլիօնաւոր աստղերից, որոնք անց են կացրել զարգացման տարբեր աստիճաններ: Այս աստղերի միջև ցիրուցան ընկած են մեղմ կերպով լուսաւորող ամպեր, այսպէս կոչուած միգային բծեր. գէթ նրանցից մի քանիսը, ինչպէս օրինակի համար Հայկ համաստեղութեան մէջ միգամածները երևում են հասարակ աչքով: Այդ միգամածները մասամբ կազմում են շատ կարծր և մեզանից ահազին տարածութեամբ հեռացած աստղերի կոյտ, որոնց լոյսը մեր աչքին խառնուած է երևում միգային շողերի հետ: Միայն ամենաուժեղ հեռագրիտակները պարզում են նրանց իսկական բնույթը: Աստղաբաշխները ապացուցին, որ մի քանի միգամածներ մասամբ ներկայացնում են արեգակնային համակարգութիւններ, որոնք գտնուում են զարգացման առաջին աստիճանի վերայ և բազկացած

են. գաղային պատող նիւթերից, սկզբնական իրերից կամ գազանման աստղերից, որոնք արդէն ընդունել են գնդի ձև: Նորագոյն հետազոտութիւնները ցոյց տուին, որ այս աստղային գազանման միգամածները մեծ մասամբ գետեղուած են կաթնածրի մէջ տեղում: Եթէ մենք կարողանայինք տեսնել նրանց հասարակ աչքով, այն ժամանակ նրանք մեր աչքին կը ներկայանային նեղ մարգարտեայ մանեակի ձևով, պատած երկնքի շուրջը: Միգամած աստղերի այս դրութիւնը չափազանց հետաքրքիր է և մեր մէջ միտք է ծագում, թէ՛ արդեօք այդ աստղերը չէ՞ն կազմում ամբողջովին անկախ համակարգութիւն և մեր երկնակամարի վերայ գտնուող բոլոր աստղերի հիմքը: Վերին աստիճանի հետաքրքիր է և այն, որ կաթնածրի մէջ կան մութ տեղեր, ըստ երևոյթին տարածութիւններ, որի միջից կարելի է դիտել մեր աշխարհի միւս կողմը գտնուած երկնային մութ տարածութիւնը: Երկնքի ներկայիս լուսանկարումը, որը այժմ աստղաբաշխական հետազոտութիւնների օժանդակ միջոցներից ամենանշանաւորն է, մեզ ցոյց տուեց, թէ ինչքան աստղերի բազմութիւնից է բազկացած կաթնածիրը և թէ ինչպէս այդ աստղերը մի քանի տեղերում թանձր կոյտեր են կազմում: Այդ լուսանկարման շնորհիւ մենք ճիշտ գաղափար կազմեցինք ձևի, ծաւալի, միգամած բլրների և աստղերի մասին: Համեմատելով այս լուսանկարները նախկին նկարների հետ, որոնք նկարուած էին հոչակաւոր աստղաբաշխների ձեռքով, մենք տեսնում ենք, որ այդ նկարները մօտաւորապէս ուղիղ են, իսկ մասամբ էլ յաճախ բոլորովին անկանոն: Այլ կերպ չէր էլ կարող լինել:

Ինչպէս որ մենք արդէն ասել ենք, այդ միգամածներից շատ շատերը երբ գիտում ենք ամենազո-

րեղ հեռադիտակով՝ ցոյց են տալիս աստղերի մի ահագին կոյտ. իսկ միւսները, ինչպէս օրինակի համար՝ Հայկ և Անդրոմիդ համաստեղութիւնների նշանաւոր միգամածները, բաղկացած են գաղի ամենավիթխարի շիկացած զանգուածներից. նրանք ամենայն հաւանականութեամբ ներկայացնում են տիեզերական նոր համակարգութիւնների զարգացնող սաղմեր: Նոյնը կարելի է ասել Օձակիր համաստեղութեան միգամածների մասին, որի մէջ երևում են առանձնապէս բազմաթիւ միգամած աստղեր: Բայց ինչո՞ւ մի քանի միգամածներ օղակաձև են, միւսները՝ իլիկաձև կամ ոսպնաձև, երրորդը՝ պարուրաձև. ինչո՞ւ համար նրանցից մի քանիսը երևում են բաւականին հասարակ չափով կարգաւորուած, այնինչ միւսները կարծես թէ քշուած են վտթորկից, — այդ մենք չգիտենք: Մենք չգիտենք նոյնպէս, թէ ինչ օրէնքների է ենթարկուած նրանց շարժումը և կարգաւորութիւնը. մենք չգիտենք՝ ինչպիսի տարածութիւն է բաժանում նրանց մեղանից: Այդ տարածութիւնը պէտք է որ շատ մեծ լինի. երկնային տարածութեան մէջ նրանցից արձակուած ու տարածուած լոյսը մի վայրկեանում 300000 կիլոմետր արագութեամբ հասնում է մեզ հարիւրաւոր, գուցէ և հազարաւոր տարիների ընթացքում: Այսպիսով մենք ներկայումս տեսնում ենք միգամածը իւր այն ձևով, ինչ ձևով որ նա գտնուում էր աւելի կամ պակաս հեռու անցեալում:

Եթէ մենք կրկին դառնանք այդ հեռու աստղային աշխարհից դէպի մեր արեգակնային համակարգութիւնը, այն ժամանակ մենք կը հանդիպենք դեռ չլուծուած և ամենամեծ առեղծուածներից մէկին, որ ունի աւելի կարևոր նշանակութիւն մեր երկրագնդի և բոլոր մարդկութեան ապագայի համար. սր-

տեղից է ստացւում արեգակի արձակուած ջերմութիւնը: Այս հարցի վերաբերմամբ կան մի քանի ենթադրութիւններ՝ այդ ասել է թէ՛ դրանցից և ոչ մէկը չէ տալիս լիովին բաւարար վճիռ: Ներկայումս ամենից աւելի տարածուած և ամենից աւելի ժամանակակից գիտութեան դրութեանը համապատասխան այն ենթադրութիւնն է, որ արեգակը գտնուելով հրային ու հեղուկ դրութեան մէջ, անդադար սեղմուած է: Ահա այդ սեղմուածքը ծառայում է իբրև աղբիւր ջերմութեան ահագին քանակութեանը, որին արեգակը այդպէս առատօրէն ուղարկում է երկնային տարածութեան ամեն մի կողմ. բաւական է, որ ջերմութեան քանակութեան ամենաչնչին մասը մեզ է հասնում և ահա երկրի վերայ սկսւում է կեանք, կենդանական ու բուսական աշխարհ, շարժողութիւն և ոյժի զարգացում: Այս տեսութիւնը ունի այն առաւելութիւնը, որ նա կարող է հիմք ծառայել մաթեմատիկական ճիշտ հաշուի համար. այս հաշիւները ցոյց են տալիս, որ երկրի վրայ եղած ջերմութեան քանակութիւնը արտադրելու համար արեգակը պէտք է շատ քիչ սեղմուած լինի. նրանք ցոյց են տալիս նոյնպէս, որ պէտք է անցնեն շատ միլիոնաւոր տարիներ, մինչև որ արեգակը այնքան կը թանձրանայ, իսկ նրանից արձակուած ջերմութիւնը այնքան զգալիօրէն կը պակասի, որ կեանքը մեր մոլորակի վերայ կը դադարի: Բայց տարակոյս չկայ, որ պատմական ժամանակներից սկսած մեր երկրագնդի կլիմայի մէջ չէր կարելի նշմարել ոչ մէկ տատանում, որոնց պատճառը կարելի էր համարել արեգակի ջերմութեան պակասիլը: Բայց ո՞ւր են կորչում լոյսի ու ջերմութեան այն ահագին քանակութիւնները, որոնց արեգակը անդադար արձակում է երկնային տարածու-

թեան մէջ: Բայց չէ՞ որ երկրին և մոլորակներին հասնում են այդ հարստութեան լոկ ամենաչնչին մնացորդները: Այդ մենք չգիտենք: Այնուամենայնիւ այս էլ արեգեքրի չլուծուած առեղծուածներէից մէկն է:

Բայց արեգակը մեզ նոր մտածմունքների մէջ է ձգում և առաջ բերում ուրիշ շատ հարցեր ևս, որոնց մասին զիտութիւնը մինչև այժմ բաւարար պատասխան չէ տուել: Արեգակը ներկայանում է որպէս մի շիկացած տիեզերական մարմին, որը մի քանի միլիոն անգամ մեծ է երկրից. նրա ջերմութեան աստիճանը շատ աւելի գերազանց է քան այն բոլոր ջերմութեան աստիճանները, որոնք կարող են ստացուած լինել երկրի վերայ, այնպէս որ բոլոր տարրերը (հասարակ իրերը) գտնուում են նրա վերայ հրահեղուկ կամ գազանման դրութիւնների մէջ: Ահա մօտաւորապէս այն ամենը, ինչ որ աւելի կամ պակաս ճշտութեամբ գիտենք արեգակի մասին: Նրա վերայ նկատուած, այսպէս կոչուած, դարաւանդների (протуберанцевъ) և արեգակնային ջահերի ծագման յատկութիւնն ու եղանակը անյայտութեան խաւարով ծածկուած են մեզ համար: Միևնոյնը կարելի է ասել արեգակնային բծերի մասին. նրանց ծագումը գանազանակերպ է բացատրւում. բայց այդ բացատրութիւններից և ոչ մէկը չի կարելի լիովին բաւարար համարել: Աստղաբաշխները միայն գիտեն, որ նորա դարաւանդների նման առնչութիւն ունին արեգակի հրահեղուկ մարմնի գործունէութեան հետ:

Ամենամեծ հետաքրքրութիւնը ոչ մասնագէտների համար ներկայանում են դարաւանդները, արեգակի ծայրերի կարմիր բարձրութիւնները, որոնք շատ նման են հրաբլիւտային լեռների ժայթքումներին. հետազօտութիւնները ցոյց տուին, որ նրանք բաղկա-

ցած են ոչ ծխից, ոչ մոխրից, և ոչ էլ լաւայից, այլ գլխաւորապէս հրաշէկ ջրածնից և զանազան մետաղների գոլորշիներից: Արեգակի առաւելագոյն հրաբլիւտային վերակենդանացած գործունէութեան շրջաններում այս հրաշէկ գազերը բարձրանում են մի քանի վայրկեանների ընթացքում խիստ բարձր, իսկ այն արագութիւնը, որով առաջ է գալիս բարձրացումը, մենք անկարող ենք մինչև անգամ երեւակայել: Հրաշէկ գազերը բարձրանում են մօտաւորապէս միջին թուով 100000 կիլոմետր բարձրութեան վերայ: Ամենաբարձր դարաւանդը, որ նկարել էին 1895 թ. Չիկագոյի դիտարանում*) ունի մօտաւորապէս 400000 կիլոմետր: Կարելի էր ենթադրել, որ այդպիսի գործունէութեան ազդեցութեան տակ արեգակը պէտք է, որ ծածկուած լինէր միմիանց հետ կռուող հրային ալիքներով և պէտք է ունենար փոթորկալից ծովի տեսք: Բայց այդպիսի բան չի երևում: Մինչև անգամ ամենագօրեղ հեռագիտակով արեգակի մակերևոյթը թուում է բոլորովին խաղաղ: Միւս առեղծուածն է արեգակնային պսակի բնոյթը, այն լուսաւոր ճառագայթափայլ պսակի, որը տեսնւում է միայն արեգակի կատարեալ խաւարման միջոցին: Մենք գիտենք նրա ձևը, բայց ոչ նրա կազմութիւնը և յատկութիւնը: Աստղաբաշխները ենթադրում են, որ իւր ծագումով նա պարտական է արեգակի գօրեղ մագնիսական ոլորաններին:

Եթէ այժմ դառնանք մոլորակներին, մեր երկրի քոյրերին, այն ժամանակ այստեղ էլ չնայած նրանք համեմատաբար աւելի մօտ են, կը գանենք մի ամբողջ շարք չլուծուած առեղծուածներ: Չնայած բո-

*) Չիկագոյի մի շէնք է, յարմարացրած Երկնային մարմինների արժողութիւնը գիտելու համար:

լոր բարեխիղճ գիտողութիւններին ու հետազօտութիւններին, մենք հաստատապէս ոչինչ չգիտենք մինչև անգամ այնպիսի մօտիկ մոլորակների յատկութեան մասին, ինչպէս են Փայլածուն (Mercuriւ), Արուսեակը (Венера) և Հրատը (Марс): Ի՞նչպիսի թանձրութեան ու զարգացման դրութեան մէջ են գտնուում նրանք, կարո՞ղ են նրանց վերայ ապրել կենդանի արարածներ, — այդ մենք բնաւ չգիտենք: Աստղաբաշխները մտածում են, որ Հրատի նկատմամբ կարելի է դրականապէս պատասխանել. իսկ ինչ որ վերաբերում է Արուսեակին, մենք մինչև անգամ չգիտենք, կա՞յ արդեօք նրա վերայ օդ, թէև այս հարցի լուծման համար միլիոններ է ծախսուած: Այն գիտողութիւնը, այսպէս կոչուած Արուսեակի անցնելը, այսինքն՝ երբ Արուսեակը երկրի և արեգակի մեջտեղով անցնելիս աչքի է ընկնում արեգակի վերայ փոքրիկ սև կէտի ձևով, թոյլ է տալիս մեզ կարծել, որ նրա վերայ կայ օդ (ի դէպ՝ յիշենք որ այս անցքերը դիտելու համար աստղաբաշխական աշխարհախմբեր են պատրաստուում ճանապարհ ընկնելու մինչև անգամ ամենահեռու արևադարձային երկրներ): Երբ Արուսեակի կէսը գտնուում է արեգակի առաջ, այն ժամանակ միւս կէս մասի շուրջը, որ գտնուում է նրանից դուրս, կարելի է դիտել լոյսի մի նեղ շրջան: Այս չէր կարող լինել, եթէ մոլորակի վերայ օդ չլինէր: Աստղաբաշխները ենթադրում են, որ Արուսեակի օդը այնքան թափանցիկ չէ, ինչպէս մեր երկրինը և այնպէս է լցուած ջրային գոլորշիներով, որ արեգակի լոյսը անցնում է նրա միջով, ինչպէս խիտ ամպերի միջով:

Եթէ մեր տեղեկութիւնները ամենամօտ մոլորակների կազմութեան մասին այդպէս չնչին են,


ուրեմն և աւելորդ է ասել, որ աւելի հեռու մոլորակների մասին՝ ինչպէս են՝ Լուսնթագը (Юпитеръ), Երևակը (Сатурнъ), Ուրանոսը և Նեպտունը, մենք կազմում ենք միմիայն այս կամ այն ենթադրութիւնները:

Գարնանային կամ աշնանային պարզ երեկոյեան, մութը իջնելուց յետոյ, երկնքի արևմտեան մասում մենք տեսնում ենք մի խորհրդաւոր լոյս. նա բարձրանում է վեր, դէպի երկինք կոնաձև գնդակի ձև ունի, որի առանցքը մտաւորապէս զուգահիշում է կենդանակամարի առանցքի հետ: Դա՛ կենդանակամարի լոյսն է: Նա մեզ մօտ շատ աղօտ է, բայց արևադարձների մէջ և, մանաւանդ սարահարթերի նօսը չոր օդում նա աչքի է ընկնում իւր հիանալի փայլով, գերազանցելով կաթնածրի լոյսին: Արդէն հին ժամանակներից նա իր վրայ էր դարձրել մարդուս ուշադրութիւնը և զբաղեցնում էր մտաւորականներին: Բայց չնայելով սրան՝ մենք այժմս էլ դեռ չգիտենք, թէ ինչ է ներկայացնում այդ կենդանակամարի լոյսը: Առաջ հռչակաւոր աստղաբաշխները երկնակամարի լոյսը համարում էին սաստիկ տափակացրած (օղային) արեգակի թաղանդ, բայց Լապլասը ապացուցեց այսպիսի ենթադրութեան անհիմն լինելը: Ներկայումս աւելի տարածուած է այն հայեացքը, թէ կենդանակամարի լոյսը-փոշու օղամանեակի արտափայլումն է, որը լուսաւորում է արեգակով. այդ օղամանեակը շարժւում է երկրի շուրջը լուսնի ճանապարհի ներսում, ինչպէս Երևակի օղամանեակները շարժւում են այս մոլորակի շուրջը: Այս ենթադրութեանը հակասում է կենդանակամարի լոյսի դէմ յանդիման փայլելը, որը ներկայանում է աղօտ պլպլոց, գետեղուած արեգակի դէմ յանդիման.

մօտաւորապէս ապրիլի կէսում լուսաւոր շերտը կապում է նրան արեւմտեան կենդանակամարի լոյսի հետ. այս պատճառով նորագոյն ժամանակներում առաջ եկաւ նոր հիպոտեզ, այն է՝ որ նա ներկայանում է իբրև երկրի պոչ, նման գիսաւորի պոչին:

Մենք համառօտ կերպով թուեցինք այն բոլորը, որ վերաբերում է աստղաբաշխութեան չլուծուած հարցերին. այս բոլորից մեր ընթերցողները կը հասկանան, թէ հետազօտութեան ինչպիսի ընդարձակ ասպարէզ է բացուած դեռևս տաղանդաւոր աստղաբաշխի առաջ: Նրանք նոյնպէս կը հասկանան, որ այստեղ, ինչպէս և բնախօսութեան միւս ճիւղերում կան բազմաթիւ խնդիրներ, որոնց լուծումը մարդկային հոգու պատմութեան մէջ փայլուն էջեր են կազմում:

Ժամանակակից գիտութիւնը կարող է հպարտանալ ահագին յառաջադիմութիւններով: Եւ մենք ամենայն իրաւամբ կարող ենք յուսալ, որ շուտով կը գայ այն օրը, երբ մենք գէթ մի քայլ կը մօտենանք լուծելու տիեզերքի մեծ, դեռևս չլուծուած առեղծուածները:



ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՀԵՏԵԻԵԱԼ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻԻՆՆԵՐԸ՝

- I. «Ինչո՞ւ համար է կեանքը» — Լէօն-Դէնի 10 կող.
- II. «Կայսերական մատանի» Լ. Մուրախինի 10 »
- III. «Վերադարձ դէպի հայրենիք» — Կոնան-Դոյլի 15 »
- IV. «Բարոյական դաստիարակութեան հարցի շուրջը» — Ն. Սօկոլովի 25 »
- V. «Գիտնութեան ձայնը Աստուծոյ գոյութեան մասին» հեղինակութիւն Կուրբէի. — Ֆրանս. գիտ. ճեմ. անդամ . 35 »
- VI. «Գիտական զրոյցներ» — (այլ և այլ նշանաւոր հեղինակների) Ա. պրակ: . 60 »

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԵՏՁՀԵՏԷ ԼՈՅՍ ԿՏ Ե Ս Ն Ե Ն՝

- I. «Գիտական զրոյցներ» Բ պրակ:
- II. «Բարեկամական խորհուրդներ նորասի օրիորդներին» — Ած. դօկ. Ջօն Միլլերի:
- III. «Հին և նոր փիլիսոփաների տեսութիւնները տիեզերքի ծագման մասին» Պրօֆ. Մ. Բ. Վէյնշթէյն:

IV. «Երկրի ծագումը, նրա անցեալն ու ներկան» —

Ա. Պ. Նեչաև

V. «Մարդաբնակ են արդեօք աստղային աշխարհները» — Պրօֆ. Լ. Բրեններ:

VI. «Գիտնականների մէջ եղած տարածայնութիւնները և նրանց աշխարհայեացքը Աստուծոյ մասին» — Ն. Ա. Կարիշև:

VII. «Պատմական սպառցոյցներ Յիսուսի մասին» — Ֆարրարի:



ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Քարգահանի հանդէն

Нахичевань на Дону, 25-я линия д. № 29.

свят. Н. БОСНАКЯНЦЪ

38

2073

« Ազգային գրադարան



NL0064346

